


ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ԱՄԱԿԻՐ

ԵՐԵՎԱՆ, ԲԵԼՈՎԵԶԵԼ, ԳՐԱԳՈՅՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵԴՐԱՎԻՐ

ՏԱԽՆԵՐՈՐԴ ՏՈՐԻ

ՀՐՁԱՆ ՄԻԱՐԵԱՑ



ՅԵՐԱԿԱՆԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

1875

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

Ե ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԱԹՈՒԹՅ


ՍՐԸ Ա Տ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ց

ԵՒ ԱՐԴՅՈՒՆՎԻԼԻՆՔ ՆՈՑԻՆ

	ԴՐԱ	ԳՐԱ
Հայոց վարչութեան գործեց ՚ի Տաճկերէն Յ. Քիւրքճեանով . տպեալ 1872.	4	
Արշադարձը Արշադան առջեւաց , ազխարհիկ լեզուաւ .	2	
Անուբանը ՚ի Սիօն . ողեաց Ա. Թալթուլ . 1869 .	1	20
Արաքինութեան ճամանակ , կամ Մենոսոր մանկանց , թարգմանեց Տ. Հ. Թ. Ա.	7	
Աւելուարան ասենիփ . Ա. Եկեղեցոյ մէջ կալդացուելիք աւելուարաններն են .	30	
Աւելուարան փոքր . Տպեալ 1867 .	6	
— Նոյնը Կառավարանով . Տպեալ 1867 .	12	
— Նոյնը ձաշու . Տպեալ . 1868 .	30	
Բանակառութիւն , աշակերտահեաց մէջ . Բ. Տիզ 1874 .	1	
Բացարութիւն Հայոցարման եւ դղման եւ առաւատեան երգոց չորրհազ . (*)	6	
Գագիկ Վերջին արքայ Հայոց Բագրատունի , ողբերգութիւն . Տպ. 1672 .	5	
Գործք Առաքելց . Տպեալ 1867 .	6	
Գործք Ուկելինի Սամուել Ուստրի հրէի . Տպեալ 1867 .	3	
Գովասանք . Տպեալ 1867 .	3	
Եղիշէ . պատմութիւն Վարդանանց պատերազմին ընտիր գործ նախնեաց .	7	
Երեւոյթ կրից . Տպեալ 1851 .	7	
Երկրու խօսք . Եկեղեցոյ պաշտօնէից ուղղուած . Տպեալ 1873 .	3	
Խփրեմ խուրի . արօթագիրք . գործ նախնեաց . Գ. տպագ . 1870 .	7	
Զանգարանութիւն հինգ դարուց . Բ. տիզ . 1862 .	40	
Ընդհանրաւուն թուղթք Ներսիսի Շնորհալւոյ . Տպեալ . 1871 .	18	
Թանգարանն խրատու . Գ. տիզ 1870 .	18	
Թափորի տետրակ տարիկան . Տպեալ 1839 . (*)	3	
— Նոյնը շաբաթական . Տպեալ 1838 (*)	2	
— Նոյնը Ա. Յակովլուայ տաճարին մէջ Կառարուած թափորներու հանար	4	
թուաբանութիւն հանաւու , Ա. Պ. Փաշտագեանցի , Դ տիզ . 1869 .	3	
Ժամանագիրք խոշորագիր . Տպեալ 1866 .	20	
Ժամանագիրք առենի . Տպեալ 1870 .	50	
Խնջիր Ա. Տեղեաց եւ նորս պաշտօնական քննութիւնը . Տպեալ 1874 . (**)	6	
Խորհրդածութիւն Ա. պատարագի . գործ նախնեաց . Տպեալ 1842 .	10	
Խորհրդաստոր Ա. պատարագի . Տպեալ 1873 .	10	
Կարգաշրջութիւն առողջութեան . Տպեալ 1871 .	5	
Կինարդութիւն Բանքարայ . Տպեալ 1869 .	2	
Կրտսերից հոգէշահ բանից . գրեց Արքար Խոճէնց . Տպեալ 1853 .	6	
Կրթուան Աւելուարանական բանից . ԴասԱ. Արմեն Պետրոս .	1	20
” ” ” ԴասԱ. Ասմարացի .	1	20
” ” ” ԴասԱ. Ա. Արշելք Աստուճոյ .	1	20
Հանձնառութիւն երկրուասան առաքելց . հանդերձ յաւելուածով .	4	
Հանձնառութիւն Քրիստոնէական ուաման . Տպեալ 1873 .	4	
Հայելի վիրաց . Տպեալ 1852 . (*)	6	

ԵԱՀՕԹՈՒԹԻՒՆ

ԱՅԻ առընթեւ (<sup>7</sup>) ԽԵՂ գրքին հայուսագիտ ըստու իշխան  
կա լիւնց (<sup>8</sup>) բարեկան պատճեն ըստու:



A decorative horizontal border featuring four ornate, symmetrical monograms or initials in a Gothic script, flanking a central oval frame.

ՏԱՐԱՆԴԻ ՏԱՐԱՆԴԻ  
թիվ 10 ·

## ԱՐՄԵՆԻԱ

ՀԱԿԱՑՄԱՆ 31  
1875.

0.2-0.3%, բայց սիրուեն եկ գրադաւուն

Կ Բ Թ Ա. Բ Ա. Ն

## ԱՐԵՏԱՇՎԱՐԿԱՆ ԲԱՆԻՑ

¶ *U. S. g.*

*U.P.S.U.U.U.H.P. B.H. B.R.Y.*

\* Ո՞ւմ նմանեցուցից զաղգս զայս . նման է  
մանկություն՝ որ նատիվին՝ ի հարաբերական՝ կորդացինեն  
քընկերս իւրեանց . և ասիցնեն . Փոզս հարաբ ձեզ՝  
և ոչ կարաւալիցիք . ողբացաք ձեզ և ոչ կօծեցարուք  
Եկն Յովշաննենք . և ու ռուտեր և ոչ ըսնեքր . և ասեն .  
Դեւ քա՛ ի նման . Եկն Արդի մարդոց շուտեւ և ըսնեք .  
և ասեն . Ահա՛ այս կերպ և ապրեցող . բարեկամ  
մարդուն որոց և մեղքաւորոց . և արդարացաւ իւմաս-  
տութիւն յորդաց իւրց ու . Մատ . ԺԱ . 16—19:

**Ս**ԱՆԱԿ'ՆՔ, Թռչնիք մոօք այն  
նշանաւոր դարեւ, յօրում Յովհաննէս  
Մկրտչի օրաչունն կ'ոււարտի և Յիսու-

սի Քրիստոսի պաշտօնն կը սկսի : Կանգ-  
առնունք այն երերուն սահմանին վե-  
րայ, ուր նախընթաց Կարապետի վեր-  
ջին ճառագայթներն տակաւ առ առ  
կաւ կը խորառողին եւ կ'անհետին  
Արդարութեան Արեգական (Յիսուս սի)  
նորանցը և գեղագիսայլ արշու լուսոյ մէջ  
Երուսաղէմ երկու մարդարէներ ունի  
իւր առջեւ, յորոց հինն կը խոնարհի,  
կը մեզմանայ նորեկին առջեւ, և սո-  
կայն նորեկին, բազմութեան հետ խառ-

նուելով, կը խնդրէ մ՛ղատիլ իւր Նախ.  
ընթացէն այն մկրտութեամբ, որով  
կը մշտէ նու ապաշխարտութեամբ առ  
ինքն գիմնղներն ։ Բայց ՚ի զուր այն եր-  
կու մարդարէն փոխադարձ կը վիա-  
յեն իրարու համար, ժողովուրդն բան  
քը հասկնար սցն համաձայն վիայու-  
թենէն : Ընդ հակառակն՝ ժողովուրդն  
այնպէս կը կարծէ, որ այն երկու մար-  
դարէն բոլորավին իրարու ներհակ են,  
թէ վարդապետութեամբ և թէ բա-  
րյականութեամբ, մին խստութեամբ՝  
մինչեւ բրտութեան հաօած է, և միւսն  
ներզութեամբ՝ մինչեւ յետին ծայր  
թուլութեան: Վասն զի, մին ոչ կուտէ  
և ոչ կ'ըմպէ, և միւսն կ'ուտէ և կ'ըմ-  
պէ մինչեւ անգամ մայքաւորաց և մե-  
զաւորաց հետ: Եւ որովհետեւ ժողո-  
վագեան կարծիքով այն երկու մարդա-  
րէն եւս կը չափազանցին իրենց բըռ-  
նած ընթացքին մէջ, և երկոքեան ես,  
թէ և տարբեր եղանակաւ, կը հեռա-  
նան ուղիղ բանէ և ճշմարտութենէ,  
ուստի ժողովուրդն երկուսն եւս կը  
մերժէ, չընկունիր՝ ակնունելով ան-  
շուշո մի աւելի լուսաւոր և իմաստուն  
վարդապետի, որ գայ և քարոզէ միջն  
ուղիղ ճանապարհաւ, առանց երկու  
ծայրայելութեանց գիմելու: Այսպէս ուրեմն, ոչ խստակեցութիւնն եւ ոչ  
ներող գլութեանն ընդունելութեան  
չեն արժանանար ժողովրդեան կողմէն:  
Թէ Յովհաննէս Մկրտիչն և թէ Յիսուս  
Քրիստոս երկոքեան եւս կը մնան այն  
բազմութեան մէջ, նման այն մանուկ  
ներուն, որը հրապարակի մէջ նստած  
կը կոչէն իրենց ընկերներն և կ'ասեն.  
«Փող հարաբ ձեզ» և ոչ կաբուեցիք.  
ողացաք ձեզ և ոչ կօձեցարուք ։

Ժողովզեան համար անհնարին էր,  
որ կորենար ընտրութիւն առնել եւ  
այն երկու մարդարէներէն մին ըն-  
դունէր. հետեւապէս, կոմ երկուսն

եւս պիտի ընդունէր և կամ երկուսն  
եւս պիտի մերժէր: Վասն զի Յիսուս  
Քրիստոս կը ճանաչէր եւ կը հո չոկէր  
Յովհաննէս Մկրտիչ պաշտօնն և յ. յու-  
նապէս մկրտեցու նորա ձեռօք: Յով-  
հաննէս Մկրտիչն եւս, իւր կողմէն,  
մեծ յարդանօք, մեծ ակնածութեամբ  
կը խօսէր Յիսուսի Քրիստոսի վերայ:  
Եմէ Յովհաննէս Մկրտիչն մարդարէ է,  
Ուրեմն Յիսուս և մարդարէ է. քանի  
Յովհաննէս ինքն կը քարոզէ: Եմէ Յի-  
սուս մարդարէ է, ուրեմն Յովհաննէս  
եւս մարդարէ է, վասն զի Յիսուս ոչ  
միայն մարդարէ, այլ և մեծ մարդարէ  
կ'անուանէ զՅովհաննէս: Թէ մին եւ  
թէ միւսն չեն կամիր ընդունուիլ միայ-  
նակ: Երկոքեան եւս կը քարոզին, որ  
անհնար է միայն պաշտօնին հաւատալ-  
առանց միւսոյն պաշտօնին հաւատա-  
լու: Երկոքեան ևս զիրար կ'երաշխա-  
ւորեն: Երկոքեան միասին պիտի մնա-  
նեն և միասին պիտի ելեն: Եւ հետե-  
ւապէս ժողովուրդն եւս պարտաւոր-  
ուած է կամ երկուսն ևս ընդունիլ և  
կամ երկուսն եւս մերժէլ:

Կը տեսնենք ահա, եղաւաք, որ Յի-  
սուս Քրիստոս և Յովհաննէս Մկրտիչը  
հաստատապէս կը վկայէն իրարու հա-  
մար. բայց մի թէ այն փափախակի վկ-  
այութենէն ժողովուրդն չը պիտի ըս-  
տիպուի խորհիլ և կասկածիլ նոցա վկա-  
յութեան վկայ: Երբ երկու քարոզաց  
վարդապետութիւնն իրարու հակա-  
ռակ կ'երեւի, իսկ ընդ հակառակն՝ քա-  
րոզիներն միմէանց համար վկայութիւնն  
կը տան, միմէանց ջառագով կը հան-  
դիանան, իրարմէ ապացոյ կ'առնեն: Երբ  
այն երեւայթն կը տեսնուի, ընա-  
կանաբար կը հետեւի, որ կասկածներն  
իրական և հիմնաւոր չեն, և ոչ թէ հա-  
կառաթիւն, այլ անշուշտ համաձայնու-  
թիւն կայ երկու քարոզաց վարդապե-  
տութեան մէջ, և եթէ որոնուի, իս-

կոյն կը տեսնուի ո յն համաձայնութիւն  
ներ՝ Վասն զի՞նքիթէ իրական լինէր նոցա  
վարդապետութեան մէջ երեւցած հռ  
կասութիւնն, ոչ ապաբէն քարողիչքն  
աւելի շուտավ կարող էին նշանաբել միւ  
մեանց հակասութիւնն քան թէ այլք :  
Ոչ ապաբէն հակասութեան վեսան քաւ  
րողիչներուն աւելի կը վերաբերէր և  
ամենէն առաջնորդապիտի աճապարէին  
միմեանց հակասութիւնն հերթել, որ  
պէս զի իւրաքանչիւն իւր կողմէն կա-  
րող լինի կուսակցութիւն շահիլ ու իւր  
վարդապետութիւնն յառաջ տանել :  
Ոչ ապաբէն, եթէ բացարձակ խակ քը  
նշաւակէին միմեանց հակասութիւնն,  
անշուշու ուրիշ եղանակաւ կը զգա-  
ցինին ժողովրդեան, որ միմեանց հա-  
կասակ կը վարդապետեն և միայն վար-  
դապետութիւնն հերթումնէ միւսցն :  
Աակայն կը տեսնենք ահա, որ ոչ մի-  
այն չեն մէրժեր իրարու վարդապետու-  
թիւն, այլ կը վիային իրարու համար,  
թէն իրենց վարդապետութիւնն, ի-  
րենց վարմունքն, ըստ երեւութիւնն, մին  
դասապարտութիւն կ'երեւի միւսցն :  
Բացինչու զանազան ենթադրութեանց  
կը դիմէ ժողովուրդն, ինչու կը շփոմին  
ինչու կը տագնապի, քանի որ կը տես-  
նէ թէ երկու քարողիչներն իրարու հա-  
մար կը վիային, պէտք է որ ինքն եւս  
այսպէս քննութեան առնու գործն, այն  
է սոյն երկու քարողիչքն, որք իրա-  
րու հակասակ կ'երեւին, խակապէս իւ-  
րարու հակասակ չեն և անպատճառ  
մի հիմնական համաձայնութիւն կայ  
սոցա մէջ :

Եթէ ժողովուրդն այս կետէն նա-  
յէր, և այս եղանակաւ քննէր, շուտավ  
կը պարզուէր ինդիրն : Ժողովուրդն  
պիտի քննէր հիմնապէս թէ կայ ար-  
դեք իրական հակասութիւն երկու  
մարդարէից վարդապետութեան մէջ :  
Ի՞նչ բանի մէջէ արդեօք հակասու-

թիւնն : Տարբեր պարտաւորութիւնն  
ներ կը քարողեն արդեօք : Տարբեր ի-  
մաստներ և զգացումներ կը յայտնեն  
արդեօք : Տարբեր Աստուածածկ կը քարո-  
ղեն արդեօք : Ու երբէք : Տարբեր  
կերպին կը նային արդեօք ժողովրդեան  
վրայ, մին կը նախապատուէ արդեօք  
հասարակութեան մի դասն և միւսննո-  
րա ներհանին կը գործէ : Ու երբէք :  
Ովոր կը զիմէ երկու մարդարէներուն  
սիրով եւ բարով կ'ընդունին : Երկո-  
քեան եւս նոյն սէրն կը տածեն առ-  
մազովուրդն, երկոքեան եւս կը սիրեն  
բ'երեալ սրաւէրն : Երկոքեան ևս ժողո-  
վոգի բարութեան կը փափաքին : Ի՞նչ  
է ու ընթե որ կը բաժնէ երկուսն իրար-  
մէ . ի՞նչ է որ անհամաձայն և անմիտ-  
բան կ'երեւյնէ : Մին եկած է, ոչ  
կ'ուտէ, ոչ կը խմէ, այսինքն աստորիկ  
խստակեցութեամբ կ'ապրի, խակ միւսն  
եկած է, կ'ուտէ և կը խմէ, այսինքն  
միւս մարդկանց պէս կ'ապրի : Բայց ու  
րովիչեւեւ ոչ մին և ոչ միւսն իրենց կե-  
ցութեան եղանակն իրեւեւ օրինակ և  
օրէնք չեն աւանդեր այլոց, որովիչեւեւ  
կեցութեան երկու եղանակներն եւս,  
ըստ տեղոցն և ըստ ժամանակին, կտ-  
րող են գործ դրուիլ, և մին բնուա դա-  
տապարտութիւն չէ միւսցն . ուստի  
մարդ կարող չէ բնաւ այս պարագա-  
յէն օգուտ քաղել և յայտարարել, որ  
սոյն երկու մարդարէն իրարու հա-  
կասակ կը խօսին :

Բայց անշուշու դիտողութիւնն պի-  
տի անէք, եղանակը, որ ես ամեն բան  
չասացի . և արդարի՝ չասացի : Մար-  
դաց Որդին գալով ոչ միայն կ'ուտէր  
և կը խմէր, այլ կ'ուտէր և կը խմէր  
մարսաւորաց և մեղաւորաց հետ, և  
աստի կը հետեւցնեն Նրէայք, որ Որ-  
դին մարդաց բարեկամ է մաքսաւորաց  
և մեղաւորաց : Եւ ոչ միայն այսշափ,  
այլ թերեւս կ'ուղիին ասել, որ Որդին

մարդոյ ոչ միայն բարեկամէ մարսաւ և որաց և մեղաւորաց, այլ հետեւող է նոցա օրինակին, մասնակից նոցա կեանքին և ընթացքին։ Լաւ նկատեցէք, եղաքարք, միթէ զարմանալու է, որ մարդոյ Որդին բարեկամէ մեղաւորաց։ միթէ աւելի ուրախանալու չէ այս մասին։ Ոչ ապաքէն Յովհաննէս Մկրտիչն եւս կ'ընդունէր մեղաւորներին, միայն այսու տարբերութեամբ, որ նա անապատին մէջ կըսպասէր մեղաւորաց։ իսկ Յիսուս Քրիստոս կը քըչք, կ'որոնէք, կը խնդրէք մեղաւորներն։ Բարեկամէ մեղաւորաց։ և այս բարեկամութիւնն յանցանք կը համարէք Յիսուսին։ Լաւ կը մոռածէք արգեօք այս բանիս վերայ։ Դուք յանցանք կը համարէք Յիսուսին, որ ուրիշներէն, նաեւ նոյն իսկ Յովհաննէս Մկրտչէն աւելի լաւ կը յազմէ այն զզուանքին, զոր բնականաբար կըզդայ սուրբն և արդարն, երբ կը հանդիպի մեղաւոր հասարակութեան, երբ կը պատահի յանցաւոր մարդոյ, երբ կը տեսնէ մոլի մարդ։ Յանցանք կը համարէք, որ Յիսուս Քրիստոս կը գթայ այնպիսի անձանց վերայ, որոց վերայ բացի իրմէն ոչ ոք պիտի ըստիմար երթեք։ Յանցանք կը համարէք, որ այս մեղաւոր մարդիկն համարկութիւն կը գան առ աստուածային քարոզիչն արգարութեան, և երկար ժամանակ ուրոնելէն զինի՝ այժմ կը տեսնեն իրենց մէջ, կը ճանաչէն, կը սիրեն և կը փափարին նորա խօսքերն լսել, որք լի են շնորհօք եւ ճշմարտութեամբ։ Յանցանք կը համարէք, աւաղ, որ թագաւորն սրբութեան, թագաւորն սրբոց, անհուն խնարհութեամբ, սեղան նատած է մեղաւորաց հետ, որպէս զի այս պատեհ առմիւ գրաւէ նոցա սիրտն ու հսկին։ Ինչու արգեօք գուք եւս ձեր սեղանն չէք հրաւիրէք

զՅիսուս։ Յա ձեր սեղանն եւս կը գոյր Նո կ'երթայ, ուր որ զինքին կոչեն։ և եթէ մի օր Փարիսեցին եւս հրաւիրէ իւր մօա ճաւելու, պիտի սիրով երթայ այս ամենաբարի Փրկիչն և թերեւս այս սեղանին վերայ եւս պիտի հնչեցնէ իւր ամենէն սրտաշարժ և ամենէն վըսն մագցն քարոզի։ Բայց գուք կ'ասէք, միթէ հացկերոյթն քարոզութեան տեղէ ։ միթէ ուտելով և խմելով վարդապետութիւն կը լինի։ Ի՞նչ պատրաստութիւն, ինչ տեղ, ինչ լսարան է այս, ուր բարեպաշտութիւն կը քարոզուի։ Միթէ այս է սեղին և եղանակներն քարոզից և վարդապետութեան Գիտեմ, գիտեմ, որ բաս ձեզ, պէտք է հեռացնել այս սեղանն, պէտք է վերցնել այս կերակուրներն, գիններն, ծաղիններն եւ թերեւս այս կանաչեղններն իսկ, և շուտով պատրաստել քարոզութեան ամբիոն մարգարէին համար։ Միթէ Յիսուս շատ անդամ, առանց յառաջաբանի և առանց հանդիսի, խօսեցած չէ երկնային բաներու վերայ, կամ մի ձիմենւոյ հավանացն տակ, կամ մի ձորակի տիանց վերայ, կամ մի մեծ ճանապարհի փուլոյ մէջ։ Ի՞նչ է ուրեմն ձեր խնդրածն, ովք մարմնաւոր և կեղծ հոգեւոր մարդիկ։ Ի՞նչ է այս ժողովն և հացկերոյթն, Յիսուսի Քրիստոսի համար, եթէ ոչ պատեհ առիթ, սրով կարող է խօսքեր խօսիլ հոգւոց խաղաղութեան համար։ Միթէ յանցաւանք են այն խնձոյքներն ու հացկերոյթներն։ Բայց գուք մինչեւ ցացար այնպէս կարծած չէք և երթեք խնձոյքներն դատապարտած չէք։ Ի՞նչ կարող է արգիլուլ ուրեմն, որ Յիսուս Քրիստոս եւս բազմի ՚ի սեղան խնցից։

Եթէ հացկերոյթներն յանցաւոր են, գուք ինչու յաճախ հացկերոյթներ կը կազմէք։ Այսնք են ուրեմն այն

ուղաններն , այն կոչունքներն , ուր կորելի չէ շոհաւետ խօսք խօսիլ և , ուր , ըստ ձեր կարծեաց , մի բարեպաշտ մարդ կորող չէ նատիլ : Բայց թաղունք սոյն հարցմանքներն և նայինք , այս բարեշուր կոչնականի գործքերուն և խօսքերուն : Յավիշաննէս Մկրտիչն , զոր դուք բնդդիմակաց կը համարէք Յիսուսին , Յավիշաննէս Մկրտիչն իւր անապատին մէջ միթէ պիտի աւելի շատ խօսէր , աւելի օգտաւէտ խօսէր : Լաւ նայեցք , լաւ ՚ի միտ առէք , նա որ այժմ սեղան կը նատի մեղաւորաց հետ , մի թէ քնառ նորան պիտի ջը նմանի՞ , որ անապատին մէջ ուրիշ կերակուր չունէր , բայց միայն մորախ և մեզը վայրենի : Վասն զի նէ ապաքէն մի և նոյն վարդապետութիւնն , մի և նոյն խօսքն է ՚ի բերանս երկոցունց : Բայն մի կաց միայն , որ գիտազութեան արժանին է . տեղի առած է Նախընթացի ճակատէն այն ախտոր խառակեցութիւնն , որով երբեմն մժագնած էր , և թագուարած է նորա տեղ երկնացին իմն խաղաղութիւն և ուրախութիւն : Բայց ասացէք համարձակի , լինչ կը խօսի նա , որ արժանի չէ այն երկնքին , զոր կը բանայ ձեզ , և այն Աստածայն , զոր կը քարոզէ ձեզ :

Այս , թողէք ինձ , որ ես ասեմ ձեզ : Երբ կը համարձակիք դուք յանդիմանել եւ կշատրել այս կամաւոր աղքատն , որ գլուխ գնելու տեղ չունի և իւր օրերն արեգակի ջերմութեան տակ կ'անցնէ և իւր գիշերներն առանց ծածկութիւն և ապաստանի . Երբ կը կըշտամբէք զնա , որ միանգամ մէծատան հացիերցթն ընդունեց , ինչպէս որ ընդունեց անապատի մէջ աղքատի հացի կտորն , այս կշտամբութեամբ դուք ձեր միագն չէք յայտներ եւ գայթակղութեան ինդիր մի կը յառզէք , որ բողոքալին անտեղի է : Զեր ցաւն ոչ այս է և

ոչ այն , այլ թէ ինչո՞ւ Յիսուս մեծատան հրաւերն ընդունած և նորո հետ սեղան նստած է : Բայց ոչ ապաքէն այս կոչունքին մէջ եւս կը խօսի չափաւորութեան , ժումկալութեան , արդարութեան և վերջին դատաստանի վերայ , ինչպէս որ կը խօսէր ծախսկներուափանց վերայ և լերանց գագաթանց վերայ : Նա կը հրաւիրէ զձեզ ՚ի սրբքութիւն , նա կը զարթուցանէ ձեր յիշալութեան յաւիտենական օրէնքներն , զօր առ ոտն կոխեցիք . նա կը նկարագրէ ձեր վիճակին և ահա այս է , զօր կարաղ չէք տանիլ և կեզծաւ որաքար գայթթակղեալ կը ձեւանաք և իրը թէ չէք ուզեր ամենեւին անսարք տեղոյ մէջ (կոչունքի մէջ ) սրբութեան գասեր և խրաններ լուէլ : Ա՛հ , աւելի լաւ պիտի լինի արգեօք լսել գաւթի մէջ , տաճարի մէջ , այն արիւնոտ բեմի բարձրութեննէն , այն խացի արիւնոտ զանդ բազմոցէն , ուստի մի վերջին անգամ եւս պէտք է ուսուցանէ և օրհնէ զմարդիկ :

Կը տեսնենք ահա , որ եթէ սոյն պիտի մի գիւրին ըննութեամբ համազւած լինէին , թէ մի և նոյն հոգին է ՚ի Յավիշաննէս Մկրտիչ և ՚ի Յիսուս Քրիստոս , մի և նոյն վարդապետութիւնն է և բարցականն . Եթէ քննած և համոզուած լինէին , որ ոչ Յավիշաննու սրբութիւնն առանց կարեկցութեան և գլութեան է և ոչ Յիսուսի Քրիստոսի կարեկցութիւնն առանց սրբութեան , այնուհետեւ հարկ չ'եր լինիր ամենեւին երկրորդ քննութեան դիւնել համոզուելու համար , որ մի միայն Պետիսի և իւր նախընթաց Կարապետի վարդապետութիւնն է արժանի ընդունելութեան : Երբ վարդապետութեան միաթիւնն հաստատուէր , անհարին էր որ պարզութիւնն արբութիւնն և գեղեցկութիւնն եւս ընդնը-

մին ըլ հաստատուելին : Ակներե պիտի տեսնուեր այնուհետեւ, որ երկու մարդ գորեքն եւս կը հրաւիրեն զմարդ ճառ նաշել զինքն և ՚ի միտ առնուլ իւր վախ ճանն ու կատարածն : Երկորեան ևս կը ջանան զարթուցանել մարդոյ խղճին մէջ զզջում և ստրջանք : Երկորեան ևս մարդն Աստուծոյ ներկայութեան բերելով կը պարտաւորեն ծունդ չըրել այս թշնամանեալ աստուծութեան առջեւ : Երկորեան եւս կը բարողեն ամենամաքուր առաքինութիւն և կը խնդրեն տպաւորել մարդոյ հոգւոյ մէջ արժանաւոր իղձեր և միտումներ : Երբ այս ամենն տեսնուեր, Ճանաչուեր և խոստովանուեր, գայթակղութիւնն իտկոյն կը գոտրեր : Բայց կործեմ թէ այսու, եւս գոհ պիտի ըլ լինէին, այլ պիտի ցանկացին խմանալ թէ քանի որ Յովհաննէս և Քրիստոս հոգւովի վարդապետութեամբ համաձայն են իրարու հետ, ինչո՞ւ համար կենցաղավարութեան մէջ իրարմէ կը տարբերին : Ինչո՞ւ համար առաջնոյն խմասութիւնըն տեսակ մի տիրութիւն և վայրագութիւն ունի : Ինչո՞ւ համար երկրորդին իմաստութիւնըն տեսակ մի տիրութիւն և վայրագութիւն ունի : Ինչո՞ւ համար առաջնոյն կը տարբերին և ասացին Յիսուսին . “ Ընդէր մեր Տէրն ըարհամարհեց պատասխանել : Յովհաննիսի աշակերտքն եկին և ասացին Յիսուսին . “ Ընդէր մեր և Փարիսեցին պահէմբ յաձախ և քո աշակերտքն ոչ պահէն ” : Յիսուս պատասխանեց . “ Միթէ մարդ ինչիցէ մանկանց առագաստի սուդ առնուլ մինչ վեսայն ընդ նոսա իցէ ” : Մասք. թ. 14—15 :

Երկու բան կը նշմարուի Յովհաննու աշակերտաց հարցման մէջ, առաջնո՞ւն է զարմացումն Յիսուսի աշակերտաց վերայ, որ բնոււ չեն պահէր . վասն զի պահէցողութիւնն էր, որ իւրենց աւելի բնական և օրինաւոր կ'երեւէր . և ընդ հակառակն ոչ պահէցողութիւնն իրենց զարմանքն կը շարժէր : Խեկ երկրորդն է այն, որ միայն իրենք չեն պահողն, այլ Փարիսեցիք եւս կը պահէն ՚ի հնուց անտի : Եւ այս պատճառաւ Փարիսեցոց օրինակն յառաջ

կը բերեն, որովհետեւ նոցա պահեցու  
զութիւնն եւս քնական կ'երեւի ինչ  
պէս իրենցն : Աւքեմն պահքն է այս  
տեղ կանոնաւորն և սովորականն . խակ  
ընդհակառակին՝ ոչ պահեցողաւթիւնն  
է բացառութիւն և նորութիւն : Մեր  
Տիրոջ պատասխանն գրեթէ մի բառի  
մէջ է, բայց այս բառն է մի ձառա-  
գայթ լուսոյ . “Փեսայի քարեկամեներն  
կարող չեն պահել քանի որ Փեսայի ի-  
րենց հետ է ա . և ոլ է այս Փեսայն .  
— ինքն Յիսուս Քրիստոս :

Այսպէս ուրեմն, ամենքն, որոնք  
Յիսուսէն առաջ էին և նորա հաղոր-  
դակցութենէն հեռի, կը պահէին .  
Յիսուս Քրիստոս պարզապէս ըլլայտ-  
նէր այս կետն . բայց նորա տուած պո-  
տասխանէն լիովին կը հասկացաւի :  
Վասն զի ոչ—պահեցողութիւնն իւր  
հետ եղածներուն համար արտօնու-  
թիւն կը համարի : Սակայն զանազա-  
նելու Փարփակցոց և Յովհաննու ա-  
շակերտաց մէջ եղած տարբերութիւ-  
ննն, զօր իրենիք չեն ուզեր զանազա-  
նել, Փարփակցոց պահքն ձեւ մի էր,  
յորմէ գաղափարն հեռացած էր, կամ  
աւելի լու է ասել, մինչդեռ ՚ի սկզբան  
պահոց գաղափարնէր՝ գաղափար արբա-  
նութեան ապաշխարտ սրտի, այժմ  
փոխած էին Փարփակցիք ուրիշ գաղո-  
փարի, այն է կամաւոր զբողութեան  
և ձեռք բերած արժանաւորութեան .  
Միով բանիւ, ՚ի սկզբան պահքն ու-  
պաշխարտութեան նշան էր, այժմ Փա-  
րփակցիք գարձուցած էին իրեւ պար-  
ծանաց նշան : Իսկ ընդհակառակին Յով-  
հաննէս Մկրտչի պահքն հիմնուած էր  
նախկին ճշմարիտ գաղափարի վերայ :  
Թէ՞նորա պահքն և թէ՞ մկրտութիւնն  
պատկեր էին ապաշխարտութեան : Յով-  
հաննէս այն պատճառաւ կը սրահէր և  
պահք կը քարոզէր, որպէս զի կարո-  
զանոր զգողի կերպիւ մարմնացնել և

պատկերացնել այն մեծ և անփոփոխ սկզբունքն՝ թէ զգաւումն, այն է լովն և սորտանույն վասն մեղաց՝ և առաջին պայման փրկութեան և միակ ճանաւ պարհ կենաց :

Բայց անշուշտ պիտի ասէք գուշը  
ինձ, եղբարք, ոչ ապաքէն Յովհաննէս  
Մկրտիչ՝ Փետայի, այսինքն Յիսուսի  
Քրիստոսի, բարեկամներէն մին էր։  
Ոչ ադոքէն սրտով՝ Փետայի ընտանու-  
թեան մէջ կը ընակէր։ Խոնդէս կո-  
րալ էր նա արտմիլ, և սգոյ ու արտա-  
սուաց առաջնորդ լինիլ արտմեալ հո-  
գիներուն։ Ոչ ապաքէն զՅիսուս Քը-  
րիստոս տեսած ժամանակ յայտարարեց  
նա, որ իւր ուրախաւթիւնն լցեալ է։

Տարակը չը կոյ, եղանակ, որ Յալ-  
Համենէս Մկրտիչ Փեսոցի բարեկամնե-  
ռէն և փեսուերներէն մին էր և հետե-  
ւապէս իւր ուրախութիւննե կատա-  
րեալ էր : Բայց սոյն Յալհամենէս Մը-  
կրտիչն, որ յինքն կ'ամենափեր բավան-  
դակ Ամին Կատակարաննե, բայր Հին  
մարգարելքն, որոց շղթայն իւր մէջ  
կ'եզերէր, պաշտօն ստացած էր ա-  
պաշտօն որութիւն քարոզելու : Նա իւր  
քարոզութեան սուր եւ պատառող  
խափանին կը բանար այն ակօններն, զո-  
րքայետ սակաւ ժամանակի սիխոտ մը-  
շակէին, պիտի պաղաքերէին երկնային  
արեգական կենացանարար ճառագայթ-  
ներն : Նու սրտերն կը պատրաստէր  
զջիսուս Քրիստոս ընդունելու համար,  
և ինչո՞վ կամ ի՞նչպէս կը պատրաստէր.  
— ապաշխարութեամբ : Տիսուր էր նո-  
րա պաշտօնն և տիսուր այն տրտմու-  
թեամբ, «Որով սիրան յուրախութիւն  
կը փախի» : Էլլէս : Ե : Տիսուր էր իրա-  
պէս և պարզապէս : Թէեւ մարգարէ,  
բայց իրքեւ մարգ և մեղաւոր՝ կը կրէր  
իւր սրտին մէջ այն ներբին տրտմու-  
թիւնն, զար կը կրէ մեղաւորն, երբ  
կամադ կամաց կրգեայ իւր խական

միճանին, կը ճանաչէ իւր մեզառութիւնն, կը ճանաչէ իւր ներողութեան կարօտ դրաւթիւնն, կը ճանաչէ, որ զրկուած է Աստուծոյ առ ջեւ յամենայն փառաց և ՚ի պատուց : Յովիշաննէս Մկրտիչ, առանց ինքնին ապաշխարել ապաշխարութիւն չէր քարտղէր : Նաներիսյացոց յիշէր մարդկային իրացնի, ինչպէս Յիառաս Քրիստոս ներկայացուցիչ պիտի լինէր աստուածային արդարութեան : Յովիշաննէս կը տեսնէր ամենամեծ և խորհրդաւոր ժամանակակիցն հասած . կը տեսնէր իւր թշուառ ազգի վիճակին, զոր իւր մէջ կը կրէր բովանդակ, կը առանէր տառապարն առ արմին ծառաց . կը տեսնէր աստուածային ցառու մն, որ պիտի զեղանելի ողարձութեամբ և գեթութեամբ հանդերձ, կը տեսնէր այս ամենն եւ կ'առձապարէր ամեն եղանակ գործ գրնել, և թէ բանիւ և թէ գործով զեղանակի իւր ազգին :

Յովիշաննէս էր կենդանի ուռան, կենդանի մռարձ, զրկուած սրակըն բեկանելու համար՝ ուստի և իւր կեանքն իւր պաշտօնի խառութեանն կը համակերպէր : Հազարաւոր խառութիւններ գործ կը զնէր իւր անձին գեմ, ուստանելի խառակեցութեան մէջ զինքն կը կրթէր . բայց այս ամենն առակուին անկառար նշան էին այն խառութեան, որալ կը արտմի ծշմարտապէս ապաշխատող սիրտն : Յովիշաննէս Մկրտչի ընակած անապատն մի գասէ և միանե գատմայն մի սրտուկեր : Դասէ նոցու հոմար, որանք տակաւեին չը գիտեն թէ ինչպէս աշխարհիս գլուխոցներն, աշխարհիս յուզումներն գիւրութեամբ կը ծածկեն կը լուեցնեն խղճի և Աստուծոյ ձայնն : Գտակեր է այն անապատն այն մեզքէ յազմահարեալ հոգւցն, որոյ միխմարութիւններն յանեկարծ կ'ըսպաս ին, և իւր շուրջն ուրիշ

բան չը տեսնէր, բայց միայն իւր մեղքը լին - տիմուր անապատ : Յովիշաննէս օդոյ խառութեան կը մատնէ իւր անձն, խոչըր ու տելիքներով կը մնանի, իբրև պատկեր այն առաջնարող մեզաւորին, որ զինքն խապառ անարժան կը համարէ աստուածային նարհաց և մինչեւ անգամ այն բարիքներուն, զոր հաւասարապէս կը բացնէ ամեն արարածոց : Յովիշաննէս Կորապետի ընթացքն թէ բանաւորէ և թէ գերբնական : Նորավարքն, նորա ընթացքն յաւիտեան պիտի նշան և օրինակ լինէր ապաշխարութեան : Արդ՝ ամեն ապաշխարող հսկի բնակած է այն անապատին մէջ, կերտապատած է սոյն վայրենի կերտարով, և այս նուռառ և ողբարի մերկութեամբ ներկայացած է աստուածային արդարութեան բարկացայտ նայուածքն :

Բայց ահաւ ասիկ Գտուն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի, ահաւասիկ Փետոյն մարդկութեան ՚ի սու գտրտմութեան : Ահաւասիկ Հրեշտակն Աւխտի, ահաւասիկ Միջնորդն : Եթէ ամենայն ինչ ՚ի Յովիշաննէս Մկրտիչ պիտի համապատասխանէր իւր ներկայացուցած գաղափարին, ոչ ապաքէն ամենայն ինչ ՚ի Յիառաս Քրիստոս պիտի յայտնէ մեզ թէ ինչ է Յիառաս Քրիստոս : Այս, եղբարք իմ, առանց և սին սպասելու եւս՝ ակներեւ կը յայտնէ մեզ Յիառաս թէ ինչ է ինքն : Վասն զի նորա բոլոր պաշտօնն արդէն մի երիսր չորշարակը է, նորա բովանդակ կեանքն մի չարաշար մահ է : Ոչ թէ միայն մարդ պիտի լինի նա, որ նորա համար արդէն կը նշանակէ մեռնիլ, բայց որովհետեւ մեք մեղաւոր գողով՝ պիտի չը համենայինք՝ թէ ոչ թագաւորական ծերանի, ոչ մեծութիւն, ոչ գանձ պիտի չը կարողանային յարդարել այն հրաշողի իջումն, ուստի սցն

ունայնութեան մէջ նա պիտի որսնէ մի  
աւելի յայտնի ունայնութիւնն, նա ,  
մարդկութեան համար իւր անձն ու  
նայնացնելով՝ պիտի յառաջէ, պիտի ի-  
շանէ ՚ի մահ, նա պիտի լինի ազքատ,  
պիտի լինի անշուք և անարդ, նա տեղ  
պիտի չ'ունենաց իւր գլուխն հանգչե-  
ցունելու համար, Նա ամեն բանի պի-  
տի զիջանի, պիտի պահանջէն եւ նա  
բնաւ պիտի ընդգիւմանաց : Ազքատ  
ներու, բրոտաներու և անարդ մարդ-  
կանց ընկերութեան մէջ նա պիտի կրէ,  
՚ի պատահել հարկին, քաղց, ծարաւ,  
ցուրտ, տօթ, զրկանք և նախատինք:  
Քայց մի պահանջէք Յիսուսէն, ինչ որ  
կարող չէ ներկայացնել, մի պահանջէք  
զգացմն և ապաշխարութիւն, որ օտա-  
րուի է նորա սուրբ որտին, սուրբ ան-  
ձին համար, Յովհաննէս Մկրտիչն ա-  
նապատն խնդրեց՝ անապատն համար,  
քաղցն՝ քաղցին համար, զրկանք՝ զրկ-  
ման համար, չբաւօրութիւնն՝ չքո-  
ւորութեան համար : Քայց ոյսպէս չէ  
մեր Տիրոջ կրածն : Նա պիտի կրէ, պի-  
տի չորչարի առաւել քան զՅովհան-  
նէս, քայց ոչ թէ իւր անձի օգնու-  
թեան համար, այլ այն քարեաց հա-  
մար, զոր կամի անել կոմ արած է  
մարդկութեան համար, Սակայն, բա-  
րութիւնն, որ նորա միտկ օրէնքն է,  
մարդասիրութիւնն, որ նորա սկզբունքն  
է, պէտք է զինքն վարեն ամեն տեղ:  
Նա պիտի լինի մերթ մեծամեծաց սրա-

լանելու մէջ, եթէ մեծամեծթ զինքն  
կոչեն, մերթ և աւելի յաճախ պիտի  
լինի ազքատաց մօտ, եթէ ազքատ  
ներն զինքն խնդրեն : Միովլքանիւ, նա  
կը գլուխ ինչպէս մեծամեծներուն, նոյն  
պէս և ազքատներուն : Վասն զի կը  
տեսնէ նա, որ մեծատուններն իսկ,  
որք երջանիկ կ'երեւին, իրենց մահէն  
զինի, իրենց ունեցածէն կողոպառւելէն  
զինի, գարձեալ իրենց բաժին թշուա-  
ռութիւնն պիտի ունենան : Ուրեմն մի  
պահանջէք, որ չը մտնէ մեծատոնց  
ընկերութեան մէջ . Թողէք որ նորա  
ներկայութիւնն սրբագրծէ նոյցա տօ-  
ներն ու հայկերոյթներն . նորա ասո-  
ուածային խօսքերն ուղղեն, սրբագր-  
րեն նոյցա ուրախութեանց և զուար-  
ծութեանց յիմօրութիւնն : Խնչպէս  
Աստուած, նոյնպէս և Մարդասիրու-  
թիւնն ամենուրեկ է : Արեգական ճա-  
ռագայթն ազտեղութեան վերաց ընկ-  
նելով՝ չը պղծուիր . Յիսուս Քրիստոս  
մեղաւորաց ընկերութեան մէջ մանեւ-  
րավ՝ չը կորսնցնէր իւր սրբութիւնն :  
Եթէ նորա պաշտելի սրբութիւնն ու  
անարախութիւնն արաւաւորուելու  
լինէր, այն վայրկենէն պիտի արաւաւ-  
որուէր, երբ մարդկանց մէջ բնակե-  
ցաւ, մարդկանց հետ խառնուեցաւ,  
Աստուածութենէն մարդկանց կարգն  
իջաւ :

( Ծարունակէլ : )

## ՏԻՓՏԻԿՈՒ

Կ. Ա. Մ.

ՅԻՇԱՏԱԿԱՑԴԻՐՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ (\*)

Եթէ յաւերժական և անմահ յի շատակութեան տենչքնաւորական ինչ իցէ ՚ի կիրա մարդկան ազգի՝ անկեալ յարարչախնամ Տեսութեն՛չն, զայն տւանիկ որ ՚ն վաղ ժամանակաց անտի կացին հրաշակերտք, եւ անմահութեան հետախնդիր հոյակապից արանցըն արարք՝ բաւականութեամբ ու բեմն մեղ լուսաբանեն :

Քանզի է՞ր աղադաւ արդեօք Բարիսնին այն երկնարերձ ամբարտակ ՚ի հակայիցն առաջնոց կանգնեալ. եւ կամ Եգիպտացւոյն անհեթեթ բրդգունք մինչեւ ցայսօր ժամանակի դեռ յուտին կացեալք . եթէ ոչ զի ՚ի սոյն բնաւորական կրից շարժեալ և ըղձակերտեալ մարդկանն նսքիմբք զանձանց իւրեանց գուն գործեցին յաւերժացուցանել զիշատակ դարուց ՚ի դարս :

Ֆե՛ր այսովէս անցանել ընդ համօքէն պատմութիւնս զառաջնոց դարուցըն անցաւորաց . եւ ահա ոչ յայլ ուստիքէ լցոց մեղ երրէք տեսանել ինչ մի ՚ի հրաշակերտ յօրինուածոց

(\*) Այն երկասիրութեան հեղինակն է Գաբրիէլ Դոգիր Փոթոթանցի : արգիւնաշատ և համբաւաւոր Վարժապետն : որց անունն օրհնութեամբ էլ յիշակի բուր Բարձրանից մէջ թէ մեծանուն Վարժապետի և թէ իւր նկարագրած ազգային Բարերարոց յիշատակն անեղծ պահպանելու և յետնոց աւանդելու համար արժան կը դատիմբ Ամազորյա միջաւ հրատարակէլ այն դրաւոր աշխատասիրութիւնն , որ օրինակուած է : ՚ի Փոթոթան մեր հովական ացելութեան ժամանակ . Հեղինակի արժանաւոր աշխակրտ Տ . Պօղոս բարձր կրօն քահանաւ ՚ի բնիսագիր օրինակէն :

Մ . Վ . Մ .

մարդկանն , կամ ՚ի սիրազի գործոց նոցին արութեանց , եթէ ոչ ՚ի սոյն ականէ աղբերէ յառաջ բղիսեալ : Որ զի և կարի քաջադէպ իսկ առ տեղեաւո զանհամար ու իւցազնութեանց մերումը աշխատի ՚ի յուշ բերել տեսութիւնս առ գեղեցիկ ատացոց նիւթոյ բանիս . այլ զի Խորէնեան քերթողաց պահեալ մնոց այն , և կամ Եղիչէից ու մանց համեզպարանից , շատ է մեղ պատուել դրութիւն . քանզի եւ բանիս նախատակ ոչ յընդհանուրսն անդ , եւ ՚ի յոյժ հեռաւորութեամբ անջատեալ սրն առ ՚ի մէնջ ձգտել պարապել , այլ որ ինչ ՚ի յետին ժամանակս և ՚ի մերում յայսմիկ քաջարքի նղեն յիշատակութեանց արժանի արարք և աղջաւական բարական բարձրական ժամանակ մրանալ , և ՚ի տրիտուր գեղեցիկ վաստակոց և առ արթնութեանց զանմահ յիշատակութեան ըղձակերտել փառս :

Բայց որպէս զի մի առ կարի համառութեան և առ ամփափ զիրան պահելց երեւեսցուք զանց առնել և զյոյժ կարեւորին ՚ի զլսաւորութիւնն առաջադիր գործոց . վասնորյ և փոքր ինչ ՚ի վերուստ առեալ զթել բանին՝ կացուք նախ զիտել թէ ուստ ուստէք եղեւ մեղ յայսոսիկ կողմանս և կաւորութիւնն . և կամ յորում ժամանակի և զինչ ինչ ՚ի հնոց անտի առ մեղկայցեն նշխարք յիշատակութեանց : Ապա և որ առ մերովս ժամանակօք գործեցան՝ յարեսցուք զինի , բալմանդակեալ զամենայն յերկոսին մասունս : Յառ աջնութենց ցուցանելով եթէ նախնիք մերյնթացս անդ մետասաներորդ դարուն եկեալ իցեն յԱնւոյ և բնակեալ

յայստիկ կողմանս , թէպէտ և չլցեն  
թողեալ յիշտափութիւնս ինչ զայնը  
ժամանակի եղբլութեանցն , և ոչ իսկ  
թէ ուր ուրնք կատարէին հոգեւորա-  
կան պաշտամունք նոյցա , լատ որում  
անազան ուրեմն տեսանին շնուռթիւնք  
Եկեղեցեաց յայստիկ վիճակս :

Իսկ յերկրորդ սւմն առաջի արած  
ցուք լմէ ո՞րչափի ինչ ՚ի սկզբնաւորու-  
թենէ գարուս մինչև ՚ի ներկայիս գոր-  
ծեցան աստանօր յառաջատուութիւնք  
՚ի նիւթ ազգային շինուածոց , նորո-  
գութեան ասեմ պրոց Եկեղեցեացն ,  
և նոր ՚ի նորոյ շինութեանց ազգային  
Գլուխացն . յաւելու ածովլ յիշատակու-  
թեան յատուեկ անուանց առաքինացե-  
լոցն ՚ի ներկայիս առատանուէր արովք  
առ մշտնչենաւոր հաստատութիւն դը-  
րամագլխոց իր՝ք յանուն նորակառոց  
Գլուխացն :

ՄԱՍԻ Ա.

Ապաքէն, որք միանդամյակն զմել-  
բավիր սպատմութեամբ արկին, նոցա-  
և յայտնի իսկ է բաղմագիմի հարստա-  
հարութեանցն տէսարան և աւեր աշ-  
խարհիս Հայոց. եւ մանաւանդ բնիկ  
Հայրենացն մերս Անի քաղաքի. որ  
քան զամնայն առաւելքամեաց է-  
արբ զբաժակն բարկութեան զբաժակ  
սրբամութեան յերեսաց արտաքին և  
իներքին թշնամեացյաւուրս Մանումա-  
խօսի կայսեր Յունաց իբր ՚ի 1046 ա-  
մին Քրիստոսի և յնտե նորա յաւուրս  
Արքայանայ Պարսից արքայի, որ յա-  
րիւն ներկեաց զհրաշակնրտն զայն եւ  
զմարդաշատ քաղաք, և որոյ ձարակ  
ետ զբնակիչս նորուն: Ուսաի և որք  
միանդամ մաղապուր զերծան յանօրէն  
երկաթոյն տարագէմ գնացին փախու-  
տեայք յայլ և այլ կողմանս աշխարհի.

և լցին բնակութեամբ զսահմանս օ-  
տար ագգաց :

Եւ ահա զայտու ժամանակօք իբր  
՚ի 1060 թուականին Քրիստոսի, բազ  
մութիւն Անեցւոց և շրջաբնակ աղ-  
գայնոց միաբանեալ նշն ՚ի Հայաստա-  
նէ, և սկսան ուղեւորիլ գէպ ՚ի Մոլ-  
տավիայ և ՚ի Լէհաստան, որպէս հա-  
ւաստի ցուցանեն մեղբանք Հայո Մի-  
նաս վարդապետի Բնշնեան ՚ի գիրսն  
անուանեալ Ճանապարհորդ-իշն ՚ի Լէ-  
հաստան, ուր մանրամասնաբար պատ-  
մէ զամենայն անցիցն անցելոց Անւոց  
քաղաքի և ցրտելոց բնակչաց նորուն  
յայստիկ նահանգու :

Ա. Ալ աստ են տարակուսանաց իբր ,  
զի բնաւ և ոչ ՚ի միում ՚ի քաղաքացս  
յայսցաննէ Մոլաւաւիոյ չգտանին հետք  
ինչ հնութեան շնուռածոց կամ Եկեղ  
ղեցեաց Հայոց , որպէս և ոչ իսկ յիշա-  
տակարանաց անդամ , որ զայնը ժա-  
մանակին երեւեցուացեն զանցս և զե-  
ղելութեանցն հաւաստիս : Քանզի ըս-  
տուգապէս ասել մի միայն ՚ի գրոց ան-  
տի Բժշկեանին է մեղ հմանալ զայսմ  
ամենայնէ , որպէս նաև զհնութենէ  
Եկեղեցւոյ քաղաքիս որ յանուն տուրբ  
Աստուածածնին , զօրմէ ասէ լինել ա-  
մաց իբր հինգ հարիւրոց : Ա. Ալ թէ  
ուստու ուստեք առեալ յիշէ նորա զայս  
ծանօթութիւն , չ'ունիմք ասել . զի և  
ոչ ինքն իսկ յայտ առնէ . թերեւս յա-  
ւանդութեննէ և եթ լուեալ և կամ  
դուցէ լեալ յաւուրս նորա արձանա-  
գրութեան իրիք ՚ի ժամանակաց անտի  
զնութեանն , որ արդ չկը ՚ի միջի : Քան-  
զի որ այժմն կայ տակաւին յարտա-  
քուստ Եկեղեցւոյն ՚ի վերս գրանն  
յարեւմսից կուսէ՝ ոչ վասն Եկեղեց-  
ւոյն ինչ այլ վասն գաւթիւնն շնութեան  
առնէ յիշատակութիւնս , որպէս տես-  
ցի յօրինակէդ գաղափարից հարազա-  
տութեամբ :

“ Եինեցաւ գաւիթմո այս գովելի ՚ի ժամանակի Եկեղեցպանութեան Մահատեսի Օգունտի, արդեամբք Պօլժուշնուու եղեալ ժողովրդեան, ՚ի թուին ՌՄԼԲին: Իսկ քան զայս հնագոյն ինչ շունիմք բնաւ յանկեան ուրեք, ուսափ և շնուուած հնութեան Եկեղեցւոյն մընայ անբացայսու և միայն որչափ ինչ ՚ի յիշառակեալ գրոց անտի ցուցանի, զոր վերագոյնդ նշանակեցաք:

Եւ ՚ի լինիլ այսմ այսպէս, այնուհետեւ մնայ հաւատաւալ թէ հնագոյնն քան զամենայն Եկեղեցիս Հայոց Մուտավլոյ, թերեւու և Վալախիոյ և Պոգովինայու, իցէ մերս այս Եկեղեցի, զի որ յալ և այլ քաղաքս գտանին վիճակացս, իմա՞ ՚ի Եաշ, ՚ի Ռուման, ՚ի Ֆօրշան, և ՚ի Սուչավայ, միշտ խոնարհ են ժամանակաւ քան զսա, որպէս տեսանի ՚ի նմին գրուածի:

Եւ սակայն ՚ի նոյն իսկ ՚ի սատամութենէ ուսափ լինիլ պընակութիւն մերսոյ յայսոսիկ կողմանս իրք ՚ի մէջն անդ մետասաներորդ դարուն. և զիարդ ապա մարթ էր նոյց գրեան զերիերիւր և աւելի ամս թարց Եկեղեցւոյ կեալ, ժողովուրդ՝ որ քան զիեանս անդամ զիրօնիցն նախամեծար համարէր պաշտամունս, ժողովուրդ ասեմ Անւոց քաղաքի, որ ելից առ հասարակ զամենայն վայրս Նիրակայ հօյսակատ շինուածովք տաճարոց և վանօրէից, և ապա ընդ այնչափ ժամանակս կալ մնալ ասաւանօր անմուսն յեկեղեցական պաշտամանց և ըստ գրելոցն՝ ՚ի Քարիլոնի հնոյ ժողովրդեանն ՚ի մէջ ուռեաց կախել ըզ Կոսակարանս Աստուծոյ մերս՝ զիարդ հնարաւոր:

Բայց կացք որ որպէս և ախորմէ, ըստ որում քաղաքիեալ գաանի այս ՚ի ձշմարիտ տեսութենէ առ ՚ի չգոյէ հաւատափ ապացուցաւթեանց:

Այլ ըստ իս անձին տուանձինն

գմուարին է արդարեւ հաւատալ ինէ յընթացս երկերիւր ամաց թարց եկեղեցւոյ կեցեալ իցէ նոցա, սալորեցյն յաճախութեամբ վանօրէից և հօյս կաղ տաճարոց բայց յայլմէ կողմանէ, քանզի չի բնէ ՚ի յիշառակութեանց որ լուսաւորապոյն զիրան առաջի կացուոցէ, մնայ իւրաքանչիւրոցն ՚ի կամըս ապաստան հաւան լինել կամ ոչ իմոցս այս կարծեաց, զի և ոչ իսկ յայն ձգտիմ բանիւս հուատարիմ զսոյն գործելոց ընթերցանելեացն, նա թէ և ասպարէղ իսկ կարդամ քննութեամբ ՚ի վերոց կալ և ստուգել եթէ որ արդեօք առաջինն այն առ ՚ի նախնեացն մերոց կանդնեալ եկեղեցի, և յորում ժամանակի, և կամ ոչը ոմանք նորա երախտաւորք և բարեացապարտք, զի այս ամենայն կարեւոր հանգամնէք և ծանօթութիւնք սեպհականիք համարին յիշառակարանաց որ և իցէ եկեղեցւոյ, որպէս և առ հինան եկեղեցւոյ է տեսանել, զի անուանք իւրաքանչիւր եւ բախտաւորաց և մանաւանդ շինողաց զեկեղեցիս առ յիշառակէ գրեալ պահէին ՚ի մատեան ինչ, որ Յունարէն ձայնիւ կոչէր Տիֆփիլին, և ըստ մազ Բնագիրէ կամ Ցիլապահարան Ելելշա-յ, որ պէս տեսանի առ որբայն Ներսիսի Լամբրանացւոյն, և մեծին Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսի:

Ե՞ր ապա և մերքս ոչ զայն պահէցին շաւիզ, չդիտեմ: Ա, յլ մերս իմանձ ասաւանօր զնախնիս եկեալս յԱնւոյ, և բնակացեալս աստէն, որոց անկ էր արդարեւ թողուլ ձգել յետնացն գէթ համառօտիւ յիշառակութիւնս ինչ զանհրամեշտ կարեւորաց ՚ի գիտութիւն, յորոց և մեր լուսաբանեալ բաւեաք շարունակութեան պարապ տալ, և իրեւ ՚ի հիման վերայ զմերոց ժամանակի զարարան յօդել յաւելուլ:

Այլ ասիցէ ոք, թերեւս և տրու

րեալ իցէ նոցա զայտովիսեաց յիշատաւ կութիւնս և ՚ի գիր արձանացուցեալ, բայց ժամանակն ծախսեալ սպառ եալ իցէ զայնս :

Ապաքէն և ինձ իսկ հաւանական և գլուխին ախորժելի ՚ի գեղեցիկ կողմին անդրյանկուցանել զկարծիսդ ժամանակին դնելով մեզո, որ գիտէն զամենոյն վատնել. Եթէ ոչ վաղ ուրեմն ՚ի Ծերտնեցն Խորնոցլուծեալ գտանէք այս ՚ի նմանօրինակ դէպս ինչ ՚ի գիրսն, որ առ Սահակ Բագրատունի: Ուր յետ ցուցանելոց թէ քանի գմուարութիւն էր ինքեան ըսուլ զինդիր ազգասիրին այնորիկ Խշանի և ՚ի վեպ հանել զոր ՚ի սկզբաննէ անտի եղն առ հինան Հայաստանեաց քաջութեան արարք եւ գրոց յիշատակի արժանիք, յարէ տապա և զման էրն. առ ՚ի չգոյէ, ասէ, յադ գի մերում և ոչ մի ինչ ՚ի յիշատակարանաց, զի և ոչ մի ոք պէտ յանձնն կալաւ մատենագրել զայնցանէ, և ահա ըստ այսմ և զմերոցս իմաստասիրել Ծերեւս ոչ ինչ տարագէպ, մանաւանդ թէ և կարի քաջադէպ:

Մի ապա ստգիւտ ինչ արթիք զերկասիրութեամբս այսուիկ փարու, իր քեւ որ չունիցի յինքեան զառ ՚ի վաղնջուց տեղեկութիւնն, ըստ որում, որպէս տեսաւ ՚ի վերս, համայն անյայտութեամբ գտանին վարագուրեալք. մատիցուք ուրեմն որ յառաջիւկայս նիւթ, սկիզբն առնելով երկրորդի մասին:

### ՄԱՍՆ Բ.

Զինչ հաւատարմագոյն արդեք և ճշմարտատիպ բանից տեսութիւնք, քան որ ինչ յականատեսն չինութենէ յառաջ բերեալ մատուցեն. եւ ահա յերկրորդում յայտմիկ մասին ոչ

եւս կարծ ՚ի կարծ բանից, և ոչ որ ՚ի լոյց եւ եթ զրուցաց յառաջ բերութիւնք, այլ որոց մեզն իսկ եղեաք ականատես եւ կամ յականատես անձանց՝ առ պատշաճ յօդաւորութեան գործոյս քաղեցան ծանօթութիւնք, զնոսին և հազորդել կայ մեղ զինի եկելոցն, երկուս առնելով սմայ յօդուածս, զմին վասն եկեղեցեաց նորոգութեան առանձինն և զմիւսն վասն նորակառ ոց շնութեան դպրոցացն :

### ՅՈՒՌԻԱՆ Ա.

Որ ինչ միանգամ զառաջնին շնութենէ Եկեղեցւոց Ա. Աստուածածնի էին բանք, և զնորայն հնութենէ հաւանական կամ ոչ, հատուցաք արգէն յառաջնին մասի անդ, զհետ երմեալ ծանօթութեանցն զառ ՚ի հօրէն Մինասաց ընկալելոց. զորդիս մնաց միմիայն զինքասին նորոգութեանց նորին, և զերախտաւորացն առ նմին վաստակութենէ յառաջ բերել բան: Բայց և յայն չկ ձեռն միստու ասասցուք համառօտիւ նորս վասն կառաց միւս քաղաքիս, որ յանուն Ամենաստուրբ Երրորդութեան, որպէս զի կարգաւ յառաջ մատուցենին տեսնայն բանիք արգեան շնութեածոցս, որք առ հասարակ զառաքինութեան Ազգին վերաբարողն զհանդէս :

Արդ՝ իբրեւ հետ զհետէ բազմանայր Ազգ մեր ՚ի քաղաքիս, և անբաւական լինէր հին Եկեղեցի սուրբ Առառուածնին յիւրում ծոցի կրել զբարեպաշտիկ հաւատացելոցն յորդութիւն, այնոււհետեւ այր իւրաքանչիւր շարժեալ ոգււով աստուածպաշտութեան՝ եռայր յանձնն տեսանել կանգուն միւս եւս Եկեղեցի:

Ուստի իբր յաւարտ ութ և տասներորդ դարուն, մի ոմն յականաւոր

իշխանաց աղքիս Անտոն անուն, ՚ի զորք  
մէ Խէռլեան, այր Երևելի և աղջոր-  
ատահմ, և յարդիւնս ընչց զբազմօք  
գերազանցեալ, յանձն էաւ աւատա-  
ձեռնել որ ինչ ՚ի շինուած այնր Եկե-  
ղեցւոյ արտհանչըն ծախք . յաւել ՚ի  
վերայ զի և անձնիւր հաւատացեալ  
ոչ զւցաւ իւ բավանն նուերս ինչ  
մասնաւորս յիւրաց արդեանց ընծայել,  
առ բաժանակից եւ հազորդ լինելց  
վարձուցն անմահականաց : Եւ այնպէս  
ձեռն ՚ի գործ արարեալ՝ կանդնեցաւ  
նոյն Եկեղեցի յանուն սրբոյն Օգ-  
սենտինի վկային, զօրմէ եւ ականաւ-  
ուեսքն ՚ի ծերունեաց պատմեն թէ ՚ի  
ժամանակս շինութեան նորս այս Եկե-  
ղեցւոյ, տակաւին նշմարեին անդամոր  
աւերակը ինչ հետթեան այնր վազե-  
մի Եկեղեցւոյ :

Թերեւս և յոյս իսկ ակնարկեցին  
բանք նորին իսկ Բժշկեան Հօրն ՚ի ճա-  
նապարհորդութեան անդ, ուր յետ  
ասելց զեկեղեցեաց մերոց լինիլ Եր-  
կուս և ցուցանելց թէ Երկրորդս այս  
է նորաշէն, յարէ անմիջապէս թէ՝  
“Աստանօր Երեւին աւերակը հին շի-  
նուածոց” :

Այլ որ առաւել եւս հաւանական  
գործէ մեզ զայս, և յիշատակարանն՝  
որ ՚ի ներքոյ խաչաղրում Երկուց մար-  
մարինաց զետեղելց առ Երկրորդը  
դրամբք Եկեղեցւոյն, որ այսպիսի Նի-  
շատակութիւնս առնէ :

“Յիշատակէ Խաչ՝ Բոտացի տիրա-  
ցու Խաչէրեանց Յարութիւնի որդի  
Պետրոսին և իւր համայն կենդանեաց  
և ննջեցելցն, որ ՚ի գուռն Փօթիշանու-  
նորաշէն Ս. Օգսէնտի անուամբ կա-  
ռուցեալ Եկեղեցւոյն, թուին ՌԶԴՆ ու

Ուր որպէս տեսանի, յիշատակա-  
տու սոյն խաչաղրում քարանց՝ առանց  
ինչ միտ դնելց նորոգ անուան Եկե-  
ղեցւոյն, որ է Երրորդութիւն, ընդ հը-

նոյն շփոթեալ ասէ լինել անուամբ  
սրբոյն Օգսէնտի կառուցեալ:

Բայց զայսպիսեաց աստի ոչ եւս  
փոյթ է մեզ բանս լայնել Երկայնել,  
զի եւ արդէն իսկ ՚ի սկզբան մասինս  
խատացաք ըլ միել այլ եւս ՚ի զրոյց  
դրոց չունիցիմք հաստատուն ապա-  
ցոց: Ա. Ա. ՚ի կարգ բանիս եկեղել բե-  
րեմք ՚ի վերայ թէ՝ սոյն այս Եկեղեցի,  
որպէս և հոլովք ՚ի զարդուց նորա մե-  
ծագոյն մասամբ, կամ լաւ եւս է ա-  
սել, իբրաւ առանձին ինչ գործ համա-  
րի առնն յիշատակելց, աղնուականի  
և աղդամիրի և անմահական փառօք  
պատկողի զանուն և զծետ իւրումն աղ-  
դատահմի. յորոց ապացոց յարեմք աս-  
տէն և զօրինակ յիշատակարանին փո-  
րագրելց ՚ի վերայ մարմարինի, և զե-  
տեղելց ՚ի վերայ միջնադրանն ՚ի հա-  
րաւոյ կուսէ, որ հայի ՚ի գտւիթ Եկե-  
ղեցւոյն :

“Հիմնարկեցաւ խաչապատկ սուրբ  
Եկեղեցիս ՚ի քաղաքն Փօթուշան, յա-  
նուն Ամենասուրբ Երրորդութեան,  
արդեամբ Մահամեսի Օգսէնտի, ՚ի  
ժամանակս Հայրապետութեան ամե-  
նոյն Հոյոց Տ. Պուկասու Արքազան  
Կաթողիկոսին, աշխատանօք և վերա-  
կացութեամբ Տէր Մէլքոնին Գրեշու-  
Պուծատեանց Քօմանցի, եւ յիշատակ  
մնի եօթին նախնեացն այս սուրբ Եկե-  
ղեցիս: 1795. Աւագեմիեր 1 ո:

Ա. Ա. աստանօր թերեւս սպասեացէ  
ոք ըստ կարգի և ժամանակի շնուա-  
ծոցն բանս ինչ լսել և յազգագս բարձ-  
րագրեթ ամբարտակի զանդակտաննն, որ  
յետ ոչ բազմոց զինի շնութեան Ե-  
կեղեցւոյն՝ ամբաւութեամբ ծախուց  
կառուցաւ կանդնեցաւ փոքր ինչ տա-  
րակայութեամբ առ նմին :

Բայց մի՛, աղջաշեմ, զի մեր յանձին  
կալեալ և զայնց և եթ շնութեանց  
ըթեցուցանել զգրիչ, որք զառարինա-

սէր բերմանց ազգին, միանգամայն և զխոհական նորոտափին քարոզվելն զշտն գէս . իսկ յորս ընդհակառակն ինչ ՚ի վեր երեւեսցի բան զնոցանէ մնձաւ զգուշութեամբ ՚ի վարշամակ ըստ թեատրութեամբ :

Քանզի զի՞նչ բնաւ երբէք ՚ի պար ծանաց և յառաքինութեան մասին գրեսցի սա , յորժամ նշմարեսցէ ոք զայնր ժամանակի գալրոցացն զանշքութիւն , և եկեալ ՚ի միոս հարցանիցէ թէ էր աղոգաւ այնչափ ծախուց վայրապար վասնումն ՚ի պէտս զանգակակաց , սրաբէս թէ անհրաժեշտ հարկ ՚ի վերայ կայր ՚ի հոյակապ տեղւոջ զնոսա զետեղէլ . իսկ որ ինչ առ բարեկրթութիւն մանկանցն էր , և ոչ գէթ կիսով չափ փոյթ ՚ի մէջ բերնէլ : Այլ՝ եթէ չիցէ յանդգնութիւն ասել . իրրու ՚ի հիւզս ինչ մրգապահաց ՚ի մէջ սեխենեաց զնոսա տաղաւարեկլ :

Համայն և այնաէս , ոչ եթէ նախատինս ինչ վաստակաւորացն այնոցիկ գնել ժապհիմք . այլ զանարտուղ երկասիրութիւն նացա գովիլ ևս չառնումք յանձն , թողնալ այլոց ասապարէզ . զի մի զբնաւն մէք ինքնին երեւեսցուք դրաւեալ :

Հապա կայցէ այն յիւրում տեղւոջ և մէք փոյթ կացուէք անցանել ՚ի նըպատակ առաջադրութեանս , այն է ՚ի նորոգութիւնս կարեւորագունիցն շենուածոց , յոր ՚ի սկզբանէ անտի ուղղեալս եմք :

Եւ արդ ըստ ասացելումն , որ հընմայն և ծերանայ՝ մէրծ յապականութիւն , ոչ ինչ հանդէպ օրինակէս էր տեսանել և զմերս այս եկեղեցի սուրբ Աստուածածնին , որ ՚ի հոլովմանէ այն չափ կարեւոր ամաց ապականութեան տուեալ տեղի ու եւս բաւեէր այնունեաւ զափակ բերել վայելութեան զԱստությ Տաճարի , ուստի և կարդ

յոյժ անօրոտեհ այլ եւս մնալ ՚ի հնոյն վնամակինսի մասուեր անշբութեան ՚ի լուսաւորակ յայսմիկ գարուս : Այն զի և գէղողորդ որցծառ ութիւն շենուածոց Եղորդութիւնան Եկեղեցւոյն ոչ փոքր ինչ նախանձուեկս բերեր ժողովրդեանն Աստություն , վոսն որպ սրբ իւրաքանչիւր վութեայր ձնապէք ՚ի նորոգութիւնն սորին , Բայց պարագայիւր ինչ ոչ ներելով ՚ի գործ անդր միսէլ բազում անդամ լինէր սոցա զարատրաստութեամբ գալ , և ՚ի զանազան խոքնդակ ոց արգելուլ կասիլ , մինչեւ ցամ Տէսուն 1826 , յորում ժամանակի բարեբախտութեամբ իմն դիպեալաստանօր Սրբ Աթոռոյն Երուսաղէմի բազմարդիւն Նուիրտկ Մարկոս Ծայրագոյն վարդապետն Փօթիշտնցի , ընդիւր հոգեծին սրգւաց Գէորգ վարդապետի Ռօմանցւոց , և ծանուցեալ զառտուածահաճն միոս ժաղովրդեանն , բաւուն եհար յորդորել և քաջաներել զնոսա չքլբանիլ երբէք յակնկալութենէ յաջողուածոցն :

Ուստի սրբ իւրաքանչիւր ձեռն ըզմիջավը պեղեալ և գօտեւորեալ վութեացաւ իւրավանն կցորդ լինել յառաջատուութիւն գործոյն եւս առ ՚ի գործադրել զիրսն հաճութեամբ հասարակաց ընտրեցաւ ՚ի գործակատար վերատեսչութե առ արինազարդն միշխանս Ստեփան Բիդար Կոյլաւեան , որդի Կոյլաւեան Դաւիթի , որ հանգունատիպ հնոյն Զօրաբարէլի մրացաւ յառաջ վարեցաւ յայս բարեպաշտիկ գործ , զոր և քրտամբ չափ և արեամբ պատակազարդեաց ՚ի գլուխ տարաւ սատարութեամբ նուիրանաց համօրէն ժողովրդեանն մեծի և փոքր իւրաքանչիւր ըստ իւրում կարի , որպէս և բան միշատակարանին զետեղելց յարտաքուստ ՚ի ծակատ գաւթիւնյացտ առնէ , ունելով օրինակ բանի զայս :

Ա Սուրբ Աստուածածնի Տաճարս, որ իր երեք հարիւր ամօքյառաջ շենքալ եր ամենակարողութեամբն Աստուածոյ, այժմ նորոգեցաւ բաց ՚ի յորմաց գմբէթայրի կաթուղիկիւ եւ զանդակատամբ արդեամբ Փօմթիշանու Աղաջայ իշխանապետաց և իշխանաց և համայն ժողովրդոց, բազմարդիւն վերակացութեամբ Կոյլաւեան Աղաջայ Ստեփանի : 1826 . Յունիս 21 :

Իսկ ապա որ առանձինն ՚ի շենուած աւագ խորանի Եկեղեցւոյն առատաձեռնեաց հանդերձ փարածոյ խաչկարտն և ուկեղծ նկարուք եղեւ Խոահակ իշխանն ՚ի զարմէ Պօլֆօսեան առ ՚ի յիշատակ համօրէն իւրումն աղդատոնհմի :

Ըստ այսմ և աւանդատուն որքոյ Եկեղեցւոյն է յատուկ իմն գործ յիշտակի ոմանց բարեպաշտոն անձանց, որոց անուանք յայտնի կան ՚ի յիշտակարանի անդ զետեղելց ՚ի ներքնակողմն աւանդատատանն, և է ըստ օրինակի բար այսմիկ, “Յիշտատակ է նորաշնեն աւանդատունն խորանաւ և խաչտապատկ գմբէթիւ Տերտերեանց Յովհաննէնէնեան Աղաջայ Խաչերեսին և եղբարցին, նաեւ Խափիեան Աղաջայ Սարգսին, եւս Զատիկիեան Աղաջայ Տնիկին, և համայն կենդանեաց և նիշեցելոց սոցա : 1826 ”:

Արդ՝ իբրեւ այս ամենայն վայել չաշուք պայծառութեամբ ՚ի գլուխ ել, և ներքին և արտաքին զարդուքն պասկեցաւ գերազանց գտեալ բազում առագելութեամբ քան զմիւս Եկեղեցի Ա. Երրորդութեան, այնուհետեւ այլ իմն գեղեցիկ նախանձաւորութիւն յուղէր ՚ի սիրտ բարեպաշտիկ ժաղովրդեանքն, այն է ՚ի հաւասարութիւն ածել կացուցանել զօրինուած երկուց սըրբոց Եկեղեցեացն, եւ համեմատ շափ սկզութեամբ յարդարել զնոսա, զի մինչ այլատարալ մին ՚ի միուսէն երեւեացի, և կամ առաւելութիւն արտաքնայարդար զարդու շնուածոյ միշն՝ զմիւոյն աղօտացուայէ զտեսիլ և զուք :

Վասն որոց յամին 1832 նոյն իշխանապետը ազգիս և գրեան նոյն ժողովուրդի կրկին անդամ ՚ի բարեղաշտութիւն շարժեալ և նուերս նեկայութար տրոց առատաձեռնեալ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում, կազմեցին կացուցին գումար ինչ հաւաքածոյ արդեանց բաւական ՚ի սպասահարկութիւն ծախուցն կարեւորաց, որով նորոգեցաւ նոյն էկեղեցի կրկնագմբէթ և գեղեցիկադիր յաւելեալ առ երի յաջակազմն կոյս և աւանդատուն ինչ վայել չադիր, յորում և առանձինն կանգնեցաւ խորան գեղայօրէն զարդու ՚ի յիշտակ Կոյլաւեան բուն Տօհմին արդեամբը Լուսիկ իշխանի Կոյլաւեան և իւրումն ամսուանց Մարիամտիկնջ, որ ՚ի զարմէն Խէուլեան :

Սոյնպէս և գաւիթ Եկեղեցւոյս, որ յառաջն էր կարի փաքրագիր, ընդարձակեցաւ վայելու չամեմատութեամբ և իւրունոր ՚ի նորոց շննեցաւ արդեամբ ժաղովրդեանն, յորում և գեղեցիկազարդ խորան և խաչկալ կանգնեցաւ մեծադրոցն մասամբ ծախուց բարեպաշտօն Մարեան եղբարց : Եւ որպէս զի յանուանէ ծանիցին սկզբնակատձառ բարեացապարտքն եւ երախտաւորքն նորոգութեան շննուածոյ Արքոց Եկեղեցւոյս, յարեմբ ասաէն զհարազատ օրինակ յիշտատակարանին, որ յարտաքուստ ՚ի վերոց գրանն յարեւմտից էուսէ կոյս զետեղեալ :

“ 1832 . Մայիս 16 : Կորոգեցաւ Սուրբ Երրորդութեան Եկեղեցիս բազմաշտն աշխատատիրութեամբ Կոյլաւեանց Ա. Դաւթի որդւոց Ա. Սահ-

իմանին արդեամբք քաղաքիս Հայկազուն ժողովադեան ՚ի յիշատակութիւն համայն կենդանեաց և ննջեցելոցն . նաեւս և բարեջան աշխատակցութեամբ Ֆօքշանցի Ա. . Ա. Ետիքի , Զատիկին անԱ. . Տօնիկի . Պօթիշան :

Այսպէս ահա ազգասիրական ողբառվ և աստուածպաշտութեամբ առցեալ իշխանք և ժողովուրդք.քաղաքիս յաւարտ յանկուցին զգայծառութիւն երկուց սրբոց Եկեղեցեաց , որ ցայսօր եւս կան ՚ի նմին պայծառութեան , զորս եւ անսասանելի պահեացէ Տէր Աստուած ըստ աւուրց երկնից մինչեւ ց յաւիտեան , յանմահ յիշատակութիւն Երախտաւորաց նոցին և Բարերարաց , զորոց եւ մեր հատուցեալ որ ինչ ՚ի պատշաճաւոր գիտելեաց , անցանեմբ յառաջ ՚ի շնութիւն Դլարոցացն :

( Շարունակիվ )

միգովք մթագնի , այնուհետեւ նախանձոտ անձանց աչաց թիւրացոց դիտակով ամենայն առաքինութիւնք՝ վատ մոլութիւնք կ'երեւին , ճշմարտութիւնն՝ ստութիւն , արդարութիւնն՝ անիրաւութիւն , ուղղութիւնն՝ ծռութիւն և անձնութրութիւնն՝ շահամիրութիւն :

Կուզես ընտիր յատկութեամբ և հազուագիւտ ձիրքով Յովսէփ Գեղեցիկ եղիր ընտանեացդ մէջ . սակայն կը տեսնես , որ շուտով եղարացդ աչաց փուշ կը լինիս , քո կեանքն նոցահամար մահէ , քո չնչառութիւնն՝ հըրեղէն կրակ , և ներկայութիւնդ ժանախարտ , զքեզ կորուսանելու հնարք կը խորհին և թշուառութեան Եգիպտոսն կիշեցնեն եւ անտի ՚ի բանան զրապարտութեան :

Կուզես ազգականացդ ազատութեան , յառաջադիմութեան և երջանկութեան համար ամեն ջանք եւ զօրութիւնք ՚ի գործ դիր , Մովսէս մարգարէին նման՝ գիտութեան գաւաղանաւ տգիտութեան ծովն պատառէ , ժողովուրդն մեղաց Փարաւոնի ծառայութենէն և մոլութեան Եգիպտոսէն աղատելով աւետեաց , լուսոյ և գիտութեան երկիրն առաջնորդէ , կուրութեան անապատին մէջ ապառաժայեալ սրտերէ գիտութեան աղբիւներ բջնեցնուր և նոքօք իմաստութեան տաղով պապակեալ հոգիքն արրուցանելով զովացնուր , երկնային մանանայիւ կերակրէ , երկու քառասուն օրեր անօթի և ծարաւ մնալով աշխատութեան լեառն ելիր , և նոցավարուց բարուց ուղղութեան և քաշքական և ընտանեկան կենաց կանոնաւորութեան համար՝ կարգաց և կանոնաց տախտակներ գրէ , եւ վերջապէս ազգիդ երկայնակեցութեան և յամայր երջանկութեան համար ըւե-

թէ ՄԻՆՉԵՒ Ո՞Ր ԱՍՏԻՃԱՆ

ՆԱԽԱՆՉԵՆ ԿԸ ԿՈՒՐԱՑՆէ ԶՄԱՐԴՆ

ՆԱԽԱՆՉԵՆ՝ ինչ ընտանեաց , ընկերութեանց եւ աղքաց մէջ տեղի դանելով որչանաց , կը թունաւորէ ընտանեկան կեանքն ու կենցազալարութիւնն , կը տապալէ ընկերականութեան հիմնաքարն և վեր ՚ի վայր կը յեղացնէ ազգայնութեան միացուցիչ տմբապինդ կապն և քաղաքական ու բարոյական կեանքն ու ոգին : Քանզի երբ բանականութեան արեգակն չոր նախանձու մառախղապատ ամպովք նունանաց , երբ մոաց գագաթան բարձր հողիզնն կրից թանձրամած

Ժ

30

Քեզ միայն կենաց տեսրակէն ջնջել և աշբեր մեղքերն և յանցանքներն թողուլ մաղթէ նոյն իսկ յԱստուծոյ սահայն դարձեալ պէտք է տեսնես, որ նորա միշտ քո բոլոր աշխատութիւնքն առ ոչինչ կը համարին, միշտ կը ջանան անկարգութեան և անբարոյականութեան յԵփիպտոսն դառնալ, կուրօրէն ըսր նախանձու Փարաւօնին ծառայել, կոյր յամսութեամբ կծուսին և սխտորն սիրել և միշտ անկարգութեանց մէջ ասպրիլ իրբեւ գերի, և ճշմարիտ Աստուծոյ տեղ որիթ պաշտել:

Կուղես քաղաքագէտ եւ հանձարեղ Թիերին նման անձնուիրաբար աշխատէ խապառ անհետայնել միապետութեան բռնութիւնն, խանգարաւմներն, զեղմունքն ու ապականեալ ոգին, և վերականգնել հսսարակապետութեան ոգին, միութեան սէրն, քաղաքական քարեկարգութիւնքն և ժողովրդեան ներքին խաղաղութիւնն. ազգդ կատարելութեան եւ ուղղութեան ծայրն հտուցանելու. համար, անձանձիր ցերեկներն ժողովին նախագահէ, մեծ խոհեմութեամբ եւ առանց կուսակցութիւն գրգռելու նիստերն շարունակէ, նպատակ ունենաւ լով միշտ ընդհանրութեան շահն ու օգուտն. իսկ գիշերներն հանգստութիւնդ ու քունդ զրհելով գրիշն ձեռքը առ, պարզ ոճով, բարձր իմաստով եւ վսիմ խորհրդածութեամբ կարդ և կանոն յօշինէ հսսարակապետութեան ոյժն զօրացնելու, ելեւմոից հաշիւն հաւասարակշռութեան մէջ դնելու եւ ազգդ յառաջադիմութեան շալին մէջ հաստատելու համոր, եւ ահա կը տեսնես որ Միապետականք չար նախանձու հրդեհով վառուած եւ անարդ շահութնքով վինուած քեզ կը դիմաւորէն,

Ժողովց մէջ մարդամեքենայ երես-փոխանաց թիւն կը ջանան աւելցնել եւ միապետասիրոց կողմն ստուարացնել, Ժողովներն կը խանգարին, լնդհանուր շահն անձնական փծնի սնապարծութեան կը զրհուի, ամէն արդարութիւն և աշխատանք ոտնակոխ կը լինին և որ ամենէն զարմանալին է, անամօթաբար կը ճգնին հասարակութեան ներկայացնել զքեզ իրբեւ որինաւորութեան և կարգաց խանգարիչ, բարեկարգութեան թշնամի եւ անկարգութեան հեղինակ :

Կուղես Աստուծոյ Որդւոյն նման քո աննման եւ երկնային հոյրենիքն թող, և մարդկութեան մեռեալ հոգւոյն վերածնելութիւն տալու համար Պաղեստին իմիր, նախին փառքդ թողլով անշուք կերպարանք ստացիր ՚ի սէր և ՚ի ստատիւ մարդկութեան, ամենեցուն հետ, այսինքն կոյր, տգէտ, նախանձու, մոլի և մեղաւոր մարդոց հետ իրբեւ եղացը կենակցիր, Աւետարանի պայծառ լցոնատարածելու համար աշկերտներ պատրաստէ, ամեն օգնութիւն, խնամք և մարդասիրութիւն մատակարարէ, սակայն կը տեսնես, որ զքեզ կը մատնէ այն աշակերտն, որում աննման սէր, ծայրագոյն խնամք և չնաշխարիկ եղացըրութիւն ջամբեցիր, անպատկառ տպտակ կը զարնէ այն անձն, զոր իւր բաղմօրեայ հիւանդութենէն բժշկեցիր :

Զքեզ կ'արհամարհեն և կ'անարդեն այն քահանայքն և քահանայապետ, գպիղքն և փարփակցիք, օրինականքն և սագուկեցիք, որոց թիւր գաղափարներն կը ջանաս քաղցրութեամբ ուղղել, սխալդատողաւթիւններն պրբագրել, մոլար մոքերն յանմոլարն ճըշմարտութիւն անդր վերածել:

Նախանձու հաստցած չարիքներն անթիւնն և անհամար : Մահն, որ ա-

մենէն դառն հարուածն է , նախանձով մոտած է աշխարհ : Ներկայացմար քեզ Կայենն , որ իւր հարազատն կը մորթէ և ահա կը տեսնես նախանձն իւր ահ . ու ելի մոլեգնութեամբ : Ա . Գիրքն , երբ Կայենի և Աբելի պատմութիւնն կը պատկերացնէ մեզ , յայտնապէս ցոյց կը տայ , թէ նախանձն մինչեւ ի՞նչ աստիճան կարող է կուրացնել զմարդ , մինչեւ ի՞նչ աստիճան կարող է կատ զեցնել . մինչեւ ի՞նչ աստիճան կարող է բանականութենէ , գթութենէ եւ կարեկցութենէ զրկել զմարդ , որովյան կարծ մի եղայրն՝ հրէշ փոխուելով միւս եղայրն կը գիշատէ :


Նախանձն ցած ոգիներու առաջին յատկանիշն է . վասն զի միայն այն մարդիկն կը նախանձին այլոց բարութեան վերայ , որոնք ինքնին բարի լինելու փափաք չունին : Այն մարդիկն միայն դարան կը լարեն իրենց անմեղ եղայրներուն՝ քսութեամբ և նենդութեամբ , որոնք անմեղ լինելու կամք և յօժարութիւն չունին : Այն մարդիկն միայն մարդու ուղիղ գործն թիւր կը մեկնեն , ներողամութիւնն թուլութիւն կը հասկնան , և աշխատանքն ունայնացնել կը ջանան , որոնք նախանձով կուրացած են , գործել չ'են ուղեր եւ իրենց բոլոր տքնութիւնն ուրիշ բանչէ , եթէ ոչ քանդել իրենց եղբօր և լնկերի շինածն : Միով բանիւ նախանձոտներն ուրիշ բանի մէջ փառք և պարծանք չեն վնասուեր , այլ միայն այլոց շինածն քանդելու , աւերելու , ունայնացնելու , որպէս զի իրենց ապիկարութիւնն ու վատութիւնն այլոց գործունէութեան և լաւութեան առջեւ չը խայտառակուի :

Նախանձու վնասն շատ անգամ , շատ եղանակներով և շատ բարոյագէտներու ձեռքով նկարագրուած է . բայց գժբաղդաբար տակաւին մարդկու-

թիւնն իսպառ որբած չէ իրմէն այս ահլուելի ախտն . տակաւին Աբէլներ սպանող Կայէններն կը խլոտին անպատկառ , տակաւին երկրի երեսէն իսպառ ցախած չէ անմեղներու արիւնն , եւ տակաւին Երկնաւոր Հօր լսէլքներն անդորրացած չեն անմեղ արեանց բոլորէն :

Ե՞րբ պիտի գայ արդեօք այն օրն , որ մարդկանց չար նախանձն բարի նախանձի փոխուի , այսինքն մարդիկ նախանձին իրենց լնկերին , բայց ոչ թէ նորա գործերն ոգընչացնելու համար , ոչ թէ նորա պատիւն ու անունն աղարտելու համար , այլ աշխատելու համար , որ ինքեանք աւելի լսւ գործեն , աւելի յառաջնեն , աւելի փառք ու պատիւ ստանան : Ե՞րբ պիտի լինի արդեօք այն օրն , որ մարդիկ մրցին իրարմէ գերազանցիլ բարեգործութեան մէջ , լնդհանուրի ծառայութեան մէջ , արդարութեան մէջ , ճըշմարտութեան մէջ , սիրոյ և օգնութեան մէջ , յորս կ'ամփոփին Աստուծոյ կամքըն և մարդկութեան փառքն ու պարծանքն :

Մ . Վ . Բ . Խ .



# ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆ

Քաջ Թագավոր .

ՄԱՂԱԴ վարեն , ուշիմ կայսեր՝ կեանս հպատակք ,  
Սիմեանց վատաց կարելցելով ատեն զկագ .  
Եւ օր քան զօր յառաջ խաղան մոյն մարթանօք ,  
Նովիմբ կայսեր՝ ճոխացուսցեն պատիւ եւ փառք :

Վագ Թագավոր .

Անվարժ կայսեր՝ որք ՚ի ներքոյ իշխանութեան ,  
Սիշտ անհանդարտ՝ ծիւեալ լինին ծովու նման .  
Քաջն զտկար՝ ճոխն զադքատ՝ վեհն զկրտուեր ,  
Ընթադրեալ նեղեն կտտեն՝ եւ ոչ խղձան :

Քաջ Հայրապետ .

Կորովիմաստ՝ ով ոչ ձօնէ Հայրապետի ,  
Արիաբար՝ չարին ընդդէմ մաքառողի .  
Եւ ընդ հստին՝ ՚ի մահուանէ աներկիւղի ,  
Գովեստ եւ շուք՝ եւ զհամբոյը պատկառելի :

Վագ Հայրապետ .

Հայրապետի խնամողի ոչ իւրայնոց ,  
Ընդդէմ լինին միահաղոյն՝ գունդըք Արբոց .  
Նա եւ յերկնուստ՝ ընդ պսակին գան կշտամբանք ,  
Ի հանդիսին տուեալ լիցին՝ աշխարհակոչ :

Քաջ Առաջնորդ .

Առաջնորդի թէ լուրջ իցեն ականողիք ,  
Յանքոյթ տանի նաւահանդիստ բանեղ օդիք ,  
Ո՛չ ՚ի նոցունց թողու գնալ զոք ՚ի բաւիլ .  
Ուր հուր անշէջ եւ գոն որդունք բազմաժանիք :

Վագ Առաջնորդ .

Վայ կուրացեալ Առաջնորդի՝ կարդաց սուրբ տառ ,  
Որոյ մնան ովսարհքն ասեմ յանլոյս խաւար .

Զորս կամաւ առ մատնութեամբ չոր սսոխին ,  
Յանդերծ տանջի՝ յարբանեկաց տարտարոսին :

Քաջ Քահանայ .

Քահանայի սրբակաց միշտ՝ վարս ունողի ,  
Աիրտս ներքուստ ասէ յաւէտ տնւր երանի ,  
Որ ըստ շաւզաց աշտկերտաց Երկնաւորին ,  
Սուրբ ընթացիւք հովուել փութայ իւրոյն հօտի :

Վապ Քահանայ .

Վարք թէ իցեն խենեշական եւ ատելի ,  
Քահանայի հովուի գառանց Քրիստոսի .  
Սրտատրոփի վայն ՚ի Տեառնէ բազմադիմեան ,  
Տացի նմա յետնում աւուր յայտ յանդիման :

Քաջ Վարժապետ .

Վարժապետի ջանասիրի եւ ուսուցչի ,  
Պատիւ յերկինս ՚ի յԱստուծուստ տուեալ լինի .  
Եւ բարեմաղթ զնմանէ ՚ի յաշխարհիս ,  
Աշտկերտաց գաոք լինիցին բարեվարժից :

Վապ Վարժապետ .

Վարժապետք վատաբարոյք նշաւակին ,  
Հանգունատիպ ալեւորեալ մեծ սովեստին .  
Օն դու ջանայ ՚ի քեզ ունիլ բարս բարիս ,  
Զի մի յետոյ անարգանաց արժան լիցիս :

Քաջ Իշխան .

Իշխանք թէ են աստուածասէր եւ երկիւղած ,  
Միշտ անաչառ զազդս գատող ըստ օրինաց .  
Պսակեսցին երկնաժառանգ ընդ իշխանաց ,  
Ի յիշխանէն քառածագեան Տիեզերաց :

Վապ Իշխան .

Զիշխանս անկիրթ վայէ պսակն դիտնոց համայն ,  
Ցորս վեց փոյթ գերդաստանաց զԱզդային տան .

Որք դատ թիւրեն որոց դիմեն առ ինքեանս ,  
կամ ուր գուցեն վէճ եւ ժխոր արծարծ մեծ տան :

Քաջ Ժողովութ :

**Զժողովրդովլք** հնազանդելոց Աստուածայնոյն ,  
Բանակը գայցեն շրջափակել երկնից զօրուն .  
Որովք իւրեանց հանդերձ կայցեն ծննդովք զերծեալ  
Աստ յարկածից անդ ՚ի նսեմ խորոց գբոյն :

Վաստ Ժողովութ :

Այն ժողովուրդք , որք գժտութիւն վրդովլագին :  
Սիրեն խուզեն եւ ցանդ զհետ նորուն պնդին ,  
Օտարանան ՚ի յարքայէն խաղաղ անուն ,  
Հպատակին սեւադիմեան զօրաց չարին :

Կ . Բագրագունեան  
Միաբնեցի :

Յ. ՀՈՎՈՒԵԱՆ

ԵԽ ԻԽԻՐ ՎԻՄԱԴԻԹ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ

Ազգային լլագիրք ումանք խօսեցան  
արդէն Յ. Հովուեանի հրատարա-  
կութեան մասին , որ , ինչպէս կ'ե-  
րեւի , տարածուած է գրեալ թէ ամեն  
հսյաբնակ քաղաքաց մէջ : Այս այլան-  
դակ հրատարակութիւնն , որ զուրկ  
է մարդկային համեստախօսութեան  
ամեն պայմաններէ , անշուշտ Ա. Խջի-  
ածին եւս հասած է , և ՚ի հարկ է  
ԱՐԱՐԱՏ Ըմագիրն կը փութայ հեր-  
քել սոյն անլուր ամբաստանադիրն ,  
որով չարաչար կ'ամբաստանուի Վ. Ե-  
հափառ . կաթողիկոսն , Ավայն , ա-  
ռանց Վ. Եհափառ . կաթողիկոսի և Ան-  
տաշեան Ատեփան Ղափիկոպոսի մէջ  
պատահած անցից խորին թափանցնելու ,

որ մութէ մեղհամար , Հովուեանի հը-  
րատարակութեան պարունակութիւ-  
նըն միայն նկատողութեան առնլով՝  
կը տեսնեմք , որ այնչափ անպարկեցո-  
է և հեռի մարդավարութենէ , որ  
Պ. Հովուեանն , փոխանակ զայլս ամ-  
բաստանելու՝ աւելի զինքն կ'ամբաս-  
տանէ : Ով որ Հայու սիրտ և արիւն  
կը կրէ . ով որ Հայութեան պատիւ-  
կրդդայ , ով որ զինքն Հայաստանեայց  
Եկեղեցւոյ զաւակ կը համարի , ան-  
հնարին է որ այսպիսի անարդ և ան-  
պատկառ լեզու գործածէ իւր Հայ-  
րապետին դէմ՝ ՚ի սոսկումն պարկեցո-  
լսելեաց և ՚ի գայթակղութիւն պար-  
զամիտ հասարակութեան :

Պ. Հովուեան ինչո՞ւ Հովովմէն կը  
յայտարարէ թէ՝ թնդըոլոքէ և կոչէ  
զիս կաթողիկոսն , պատարաստեմ՝ իրեն

Հետ գատուիլ թմիֆլեզի գատարանին մէջ և իւր գրածներս ապացուցանել։ Եթէ այսցափ վաստահ է իւր գրածներուն վերայ՝ բնշնչ սոյն յայտարարութիւնն Եշմիածնի կամ թմիֆլեզի մէջ ըքրաւ, քանի որ ինքն այն տեղ կը գըտնուէր . . . :

Պ. Հովուեան, ընդհանուր Հայրապետի գործոց վերայ խօսած ժամանակ, այնպիսի մասնաւորութեանց, այնպիսի անձնական տգեղ և անհաւատալի նկարագրութեանց կ'իջանէ, որով տարակուասանաց կ'ենթարկէ նցնիսկ իւր ընդհանուր նկատմամբ գըրածներն ։ Ուստի առաւել քան զայս խօսիլ արժան չ'եմք համարիր այս տըդեղ նիւթին վերայ .

## Ե Ե Մ Ե Կ

... Խմբագիր Սիօն աղջօդուու Ամագիր :

Մի տարիէն աւելի է, որ 60 տարեկան աղքատ Վմերիկացի մը կը գըտնուի յըտւասաղէմ. սա՝ այս մէկ տարուան միջոցին մէջ այլոց սպասաւորութիւն ընելով օրական հայր կը գտնէր, թէեւ իւր վարմունքէն եւ գործին ժամանակ գործածած ձեւերէն կ'երեւէր ցնորած ըլլալը : Այն աղքատն մէկ ամիս առաջ 4 կանգուն երկայնութեամբ եւ բաւական հաստութեամբ փայտէ խաչ մը ուսը առած փողոցները քըլի սկաւ . անցորդք երբ իրեն կը հարցնէին թէ ինչ չ'ամուր խաչն ուսը առած է . կը սպատասիսնէր՝ թէ ինքն փափաքած է իւր աշակերտ Քրիստոսի նորա սպատականին հետեւիլ, որ ըստած է . « Եթէ որ կամիցի զինի իմ գալուրացի զանձն, և ասցէ զիսաչ իւր և եկեսցէ զինի խմա :

Այս խղճուկ Վմերիկացին անդղիարէն լեզուաւ առաքելական թուղթ մը կը գրէ տեղւոյս կառավարչին, ուրավ աշխատած է ՚ի Քրիստոնէութիւն հրաւիրել զի՞ահմէտականս կառավարչին միջնորդութեամբ, ըսելով թէ ինքն աստուածակցոս կողմանէ իրկը ւած Շոաքեալ մը ըլլալով՝ ազդարարութիւն կընէ Վահմէտականաց ՚ի քրիստոնէութիւնը ընդունիլ անհաւատ պատին կը գործէն ժամանակ մօտեցած է ։ Նա ալ կը սպատասիսնէ թէ . « Երբ ասկէ 5 տարի առաջ նաւասախութեան պաշտօն կը վարէի Վնդզիս նաւասախորմիզի մէջ, որ մը սաստիկ ալէկոծութեան հանդիպած է ինք, մէկ կողմէն անձնեւը անդադար կը տեղար, միւս կողմէն որոտումները մինչեւ ծովուն յատակը կը կը խօսէին եւ փայլակները աշխարհս կը լուսաւորէին, նցն միջոցին որ ապշած երկինքը կը նայէի, յանկարծ տեսայ զԲրիստոս իր աթօնուցին վրայ նըստած, սա՝ առ խուղղելով հայեցուածքը՝ ըստ պէտք է որ այժմեան պաշտօն թողուս և երթաւ Վշետարանս քարոզելու Վահմէտականաց . ըսէ իրենց, որ եթէ զգաստանան, գարձեալ իրենց հաւատքին հետեւին, թոնդ գիտնան որ սաստիկ կերպիւ պիտի պատճուին . Ես անցապալ սոյն հրամանին նման թաղուցի պաշտօնս եւ ահա կը տեսնեմ որ ժամանակ համեր է, պէտք է որ առաքելական պաշտօնս կատարեմ, յայտնելով միանգամայն, որ կորսնցնելու ժամանակ ըստացուցի յուղապահ միջնորդ մամառած է ։ ահա իմ պարտքս կատարեցի, այսուհետեւ ես անպարտ եմ, բայց սիրու շատ, կը ցաւի որ ինձ չ' պիտի

լակը, որով և Աստուծոյ բարկութիւնը պիտի շարժի ձեր վր այ և այս պատճառաւ արդէն մեծ սուգի մէջ կը գտնուիմ: (Փ նշան սգաւորութեան ձախ թեւին վրայ սեաւ կտաւ մը կապած ունէր արդէն<sup>(1)</sup>): Այսիք ըսելով գուրս կ'ենէ դառն ցաւ և տրամութիւն յայտնելով ու արտասուելով:

Կառավարութիւնը տեսնելով, որ խեղճ և ապուշ մարդ մ'է, երբէք կարեւորութիւն չը տուաւ ըսածին:

Յիշեալ նոր առաքեալը դեռ կը շարունակէ իր պաշտօնը, այսինքն խաչը ուսու առած փողոցները կը քնի, ի իրեն հետեւորդ ունենալով շատ մը պարապորդ մանուկներ, որոնք կը ծաղրեն զինքն և կ'այսպանեն:

Խմբագիր, կը խնդրեմ ներկայս հրամատարակել ի տեղեկութիւն ազգայնոց:

1875 Հ. 20. Յարութիւն թ. 1  
Երևանը. Դաշտավայր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԿՐ ԹԱՐԱՆ  
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ  
ԳԱՎՈ Շ.  
ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՈՆԱԿԱՆ

Գեղեցիկ ոճով և պարզ մեխութեամբ բացատրուած է սոյն Տետ-

(1) Յիշեալ Ամերիկացին: քանի մի շաբաթ առաջ, մի ընդարձակ անդշեարէն զրագիր տեսորակ եւս մեր պատրիարքարանի սպասաւորին յանձնած էր Ս. Պատրիարքին տալու: Տետրուկն սեաւ ժառագուէն կը կրէր և սեաւ կնքամանը կնքուած էր, Պատրունակութիւնն էր մի փոքրիկ յառաջարան: (որով անձագութիւն կը խնդրէր մեր Ս. Պատրիարքին իւր աւետարանական քարոզութեան համար) և Ս. Գրքէն քաղուած շատ վկայութիւններ: բոլորովն առանց կազակցութեան գասաւորուած: որով անհարին էր խմանալ թէ ի՞նչ կ'ու զէ հասկացնել և ի՞նչ է իւր նորասակն:

րակին մէջ կրօնական անտարբերութեան տեսակներն և վեասներն: լուսաբանուած է պարզապէս՝ թէ ի՞նչ քան թշուառ է մի ժողովուրդ, մի ազգ, մի հասարակութիւն, երբ կը բռնական անտարբերութիւնն տիրած է իւր անդամոց մէջ և ընդհակառակն: թէ ի՞նչ քան երջանիկ է մի ժողովուրդ, երբ Քրիստոնէական կրօնն հիմն բըռնած է իւր երկրաւոր և երկնաւոր ձըւ մարիտ երջանկութեան:

Դին դ և իւս Դահկէիան:

## ՍԻՐՈՒ Զ. Բ. Օ. Ս. Ե. Ր. Ե.

Հետաքրքրաշարժ փոքրիկ Պրեսի, 88 երեսէ բաղկացեալ, թարգմանութիւն Պրիգոր Վարդապետի կ. Պօլսեցւոյ, որ կը պարունակէ իւր մէջ Տասն հիւթաւոր Պայակաց կամ ի մ պելեաց դիմառնական բանախօսութիւններն, բարոյական մարզիք և հրահանդիչ եղանակաւ: Այն բանախօսութեանց կամ ատենախօսութեանց մէջ իւրաքանչիւր Պայակ կը չանայ զինքն ջատագովիել, իսկ ընդհակառակն իւր դիմախօսն կը ձգնի նորավեսակար յատկութիւններն յերեան հանել, որով մին զմիւսն յաղթահարելով կը նշաւակեն զմիմեանս և կը պարզէն, որ վնասակար է մարդոյ՝ չարացործ գործածութիւն ոգելից և գրգռակիչ մակելեաց:

Դին 2 Դահկէիան:

Կը վաճառուին ՚ի գրատան Ա. Ե. թուոյս և ՚ի Փոխանորդաբանի կ. Պօլսեցւոյ:

	ԴՐԱ	ԳՐԱ
Հեղեղին Խաջորտդիմ. Տպեալ 1869.		39
Հենրիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Հռահանդ սիրոյ, գործ Մայեզեան Յովսէք վարժապետի. Տպ. 1870.	2	
Պերուբնա Եղեսացի, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1863.	3	
Ճաշոց գիրք. Տպեալ 1873.	300	
Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	
Ճառ դպրոցական. Երկու փաքը տեսրակներ. Տպեալ 1863 եւ Թրաը 1867.		30
Ճարտարանութիւն առ ձեռն. աշխատասիրեաց Եվազոր Մուլստեան.	3	
Մատնադրութիւն նախնաց. Տպեալ 1856.	6	
Մատթէոս Ուռհայեցի, գործ նախնաց ԺԲ դարու. Տպեալ 1869.	14	
Մեկնութիւն Եփեսացոց. Տպեալ 1850.	25	
Մեկնութիւն յայտնութեան. Ներսիսի Լամբրոնացոյ. Տպեալ 1853.	10	
Միկայելի Ասուոց ժամանակադրութիւն, գործ ԺԲ դար. Տպեալ 1871.	16	
— Երինը՝ ուլու գրչաշը բազդատուած փոքր ինչ տարրերութեամբ.	12	
Յավհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց, գործ նախնաց Թ. դարու.	10	
Յավհէփ գեղեցիկ. Տպեալ 1849.	10	
Ղեարեկ. աղօթամասոց Ս. Հօրն մերոյ գրիգորի Կարեկացոյ. Տպ. 1868.	12	
Նոր բնիքերցարան, Տպեալ 1868.	5	
Ուղերդութիւն ՚ի մաճն Ներսէս. Տպեալ 1863.	4	
Ուլու հայրենասիրի. Բ. Տեղ 1874.	4	
Ուսումն բարոց. Տպեալ 1857.	18	
Ուսումն տրամարանութեան. Տպեալ 1869.	3	
Ուսումնութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.	8	
Ուսումնութիւն նոր կրակարանի. Տպեալ 1872.	7	
Ուսումնութիւն Ս. Երևասաղեմի. քաղաքածոյ թարգմանութեամբ. Տպ. 1872.	5	
Ուսումնութիւն Երևասաղեմի. աշխատասիրեաց Խորեն Վարդապետ. (*)	8	
Ուսումնութիւն Ս. Լուսառոշի. Տպեալ 1867.	4	
Ուսումնութիւն Լէնկիթիուրայ. Տպեալ 1873.	10	
Ուսումնութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Ուսումնութիւն բարյուսկան. Տպեալ 1872.	7	
Ուսումնութիւն Հայրապաննայց. առաքելական Ս. Եկեղեցոյ. Տպեալ 1872.	16	
Ուսումնութիւն Երկամեայ պահնիսութիւն ՚ի Հապելստան. Տպեալ 1871.	20	
— Երինը՝ Գաղղարէն լեզուաւ.	20	
Սպալմա Խոշորադիր, այլ եւ այլ անգամ տաղւած.	10	
— Երինը՝ մեծ դիրքով.	6	
— Երինը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Նոյնը՝ փոքր դիրքով եւ մանր դրով.	3	
Աիօն օրագիր. կազմալ 1866 եւ մինչեւ 1873. աշխարհիկ լեզուաւ.	40	
Առորդութիւն Երևասաղեմի. Տպեալ 1859. (*)	4	
Ա արժութիւն փոխաց մանկանց. Տպեալ 1868.	6	
Տանիլլ տեղադրութիւն Երևասաղեմի. Տպեալ 1855. (*)	3	
Տարերք իմաստափրութեան. Տպեալ 1852. (*)	6	
Տեսզութիւն հովուական. Տպեալ 1856. (*)	8	
Տրամադրութիւն. Թասուելի Գրիգորի Փէտրիմազնան. Տպեալ 1853. (*)	18	
Տօնացոյց. Տպեալ 1868.	10	
Քերական. հին սեռվ. Տպեալ 1872.		20
Քերական գաղղիերէն լեզուի. Տպեալ 1871.	2	20
Քերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Քերականութիւն Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Քրիստոնէական հանուսոտ. Հայերէն եւ Արտերէն լեզուաւ. Տպ. 1879. (*)	2	
Քրացոյց եւ դուշուութիւնը ուղարկ.	1	1

# ՑԱՆԿ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Կրթարան Աւետարանական բանից . . . . .	ԴԱՍ 2.
—Արտասուբ և Երգ . (Եպրուակիլ) . . . . .	217—225
Տիփուիրն կամ Յիշատակադիրք Եկեղեցւոյ . . . . .	226—233
Թէ մինչեւ որ աստիճան նախանձն կը կուրա-	
ցընէ զմարդն . . . . .	233—235
Բարառնութիւն . . . . .	236—238
Յ. Հովուեան և իւր վիմագիր հրատարակութիւնն	238—239
Նամակ . . . . .	239—240
ՄԵՐ հրատարակութիւնք . . . . .	—241

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամօն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բազկացեալ և կուկէս ուժածածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն և երկու արծաթ ԱՇԽԱՂՅԻ, հանդերձ ճանապարհի ծախքավոր կոնֆիդի վճարելի :
- Գ. Զատ տեարակ առնել տւղթը, պեսզ և ամեն մեկ տեսրին շորո գունական վճարել :